Azg
Ազգ
2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1998 ՈՒՐԲԱԹ # 193 (1686)

Համաներումը կիրականացվի մինչեւ դեկտեմբերի 14-ը

Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու որոշումը ծրագրված է իրականացնել մինչեւ դեկտեմբերի 14-ը: Այս մասին «Նոյյան տապանին» հայտնեցին ՀՀ արդարադատության նախարարությունից: Համաներում հայտարարելու որոշումն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի սեպտեմբերի 15-ի նիստում. որոշումն առայժմ ուժի մեջ չի մտել, քանի որ դեռեւս հաստատված չէ ՀՀ նախագահի կողմից:

Հայտարարվող համաներման արդյունքում ազատազրկման վայրերից ազատ կարձակվեն 920 հոգի: Բացի այդ, կկարճվեն բազմաթիվ գործեր, կկրճատվի նաեւ ոչ ազատազրկման վայրերում պատիժ կրող մարդկանց թիվը: Համաներումը չի տարածվում ՀՀ ՔՕ 49 որիմ հոդվածով նախատեսված հանցագործությունների վրա, որոնք զուգորդվում են բռնությամբ կամ բռնության սպառնալիքով: *ԼՏ*

ԵՐԿՐՈՐԴ ԱՅԵ

ՆԱՏՕ-Հայաստան համագործակցությունը այլ երկրների դեմ ուղղվածություն չի ունենալու

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ,

Երեկ պատշգամբյան այցով Բաքվից Երեւան ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան: «Զվարթնոց» օդանավակայանում կայացած ճեպազրույցի ընթացքում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ նշեց. «Փաստը, որ տարուկես անց կրկին Հայաստանում եմ, վկայությունն է արդեն իսկ ստեղծված լավ հարաբերությունների»: Ի պատասխան այն հարցի, թե ինչո՞վ է տարբերվում Հայաստան կատարած այցը Թբիլիսի եւ Բաքու այցելություններից, Սոլանան նկատեց, որ տարբեր երկրների հետ տարբեր են հարաբերությունները, հավատալով, որ ՆԱՏՕ-ն բոլոր երկրների հետ ունի լավ հարաբերություններ եւ ցանկանում է սատարել Հայաստանին,

ԱՐՄԵՆՊՐԵՍ

որպեսզի բոլոր երկրների հետ պահպանի առավելագույնս լավ հարաբերություններ: Ռուսաստան-Հայաստան ռազմական համագործակցության վերաբերյալ Սոլանան նկատեց, որ դա Հայաստանի իրավունքն է, ընդգծելով, որ ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի հետ հարաբերությունները եւս սերտ են:

Տես էջ 2

ԵՐԵՎԱՆ-2780

Հանդիսությունների շքահանդես եւ ամենակալներ հոկտեմբերի 10-ին

Խոստանում է Երեւանի քաղաքապետը

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ,

Քաղաքապետ Սուրեն Աբրահամյանը, Երեւանի հիմնադրման 2780-ամյակին նվիրված «Էրեբունի-Երեւան» տոնակատարության ստեղծագործական խումբը եւ մայրաքաղաքի բոլոր 12 համայնքների քաղաքացիները վերջին 1-1,5 ամսում անխոնջ գիշերներ են լուսագրել, քննաքննել, նույնիսկ ինքնամոռաց ու անձնվեր աշխատանք կատարել՝ երեւանցուն եզակի տոն, հանդիսությունների շքահանդես պարգեւելու համար, տեղեկացան լրագրողները երեկ «Էրեբունի» թանգարանում հրավիրված «գեղեցիկ» եւ ըստ ամենայնի ներկայացուցչական ասուլիսում (ներկա էին քաղաքապետը, փոխքաղաքապետ Կամո Արեյանը, տոնակատարության ստեղծագործական խումբը, քաղաքացիներ): Պրն Աբրահամյանը, որ, իր խոստովանությամբ, մամուլի վերաբերմունքից դժգոհելու պատճառ չունի, լրագրողների առանձնահատուկ բարեհաճությունն է ակնկալում «առանց քաղաքական ուղղվածության մեր քաղաքին, Երեւանցուն նվիրված» հանդիսությունները լուսաբանելիս, քանզի «Երեւանին տոն է պետք, եւ Երեւանցին արժանի է այդ տոնին»:

Տոնական նախապատրաստությունների շրջանակում վերակառուցվել է Էրեբունու միջնաբերդը, համայնքներում իրականացվել եւ շարունակվում են բարեկարգման տարբեր աշխատանքներ, սկսած փողոցների, կամուրջների վերանորոգումից մինչեւ գիշերային լուսավորության խնդիրներ: Այդ ամենը «շուք կտա տոնակատարությանը»՝ դառնալով քաղաքի սեփականությունը: Իսկ եթե հաջողվի ավանդական դարձնել տոնակատարությունը, բարեկարգման շքահանդեսի, մրցույթի պես մի բան կսկսվի համայնքների միջեւ, որից կշահի (նաեւ) Երեւանցին, իր խանդավառությունը հաճույքով լրագրողներին փոխանցեց քաղաքապետը: «Տոնի հետ կապված այնքան լավ տրամադրության մեջ եմ, որ պատրաստ եմ բոլորին ներել եւ բոլորից ներողություն խնդրել», ասաց նա՝ նկատի առնելով այն «բուդկայատերերին», որոնց կարգուկանոն հաստատելու բերումով դառնացնելու առիթ է ունեցել՝ անձերների արժանանալով: Ասուլիսից հետո, ծայնագրիչների անգործության շնորհիվ լրագրողների հետ տրաբաց զրույցի ընթացքում պրն Աբրահամյանը հոգոց հանեց. «Քաղաքը հիվանդ է, բուժման կարիք ունի. ո՞ր հիվանդն է իր բժկին սիրում»:

Տես էջ 3

Ներկուսակցական պարզաբանումներ

Վանո Սիրադեղյանը կողմ չէ «Երկրապահին», «Երկրապահը» կողմ է Ռոբերտ Քոչարյանին

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

Աժ հերթական նստաշրջանը ավարտված է, եւ արդեն կարելի է արձանագրել, որ խորհրդարանի աշխատանքը գնալով կորցնում է իր օրենսդրական արդյունավետությունը: Աժ օգտակար գործունեության գործակիցը ակնհայտ նվազում է, մեկ նստաշրջանի ընթացքում պատգամավորները վավերացնում են մեկ, առավելագույնը՝ 2 օրինագիծ: Նույնը չի կարելի ասել ներքաղաքական տեղաշարժերի մասին: Հինգշաբթի՝ ավանդական ճեպազրույցի օրը, այդ տեղաշարժերի հիմնական ուղղությունները նշմարվեցին. ա) Վանո Սիրադեղյան-«Երկրապահ», ավելի ստույգ՝ պատգամավորության նախարար Վազգեն Սարգսյան հարաբերությունները ընկերական ոլորտից տեղափոխվում են քաղաքական ոլորտ: Այստեղից էլ՝ տարաբնույթ լուրերը, որոնցից հիմնականը Վանո Սիրադեղյանի դրական դիրքորոշումն է Վազգեն Սարգսյանի կուսակցական-քաղաքական հենարանը համարվող «Երկրապահ» պատգամավորական խմբի մշակած ընտրական օրենսգրքի տարբերակի հանդեպ: Ընտրական օրենսգրքի քննարկման ժամանակ յուրաքանչյուր պատգամավորի ձայն վճռորոշ է լինելու, եւ «Երկրապահից» հետո մեծությամբ երկրորդ բարս Այվազյանին վերագրվում էր մի հայտարարություն, ըստ որի «Երկրապահն» անվստահություն ունի նախագահի քաղաքականության հանդեպ: Իսկ «Երկրապահի» եւ Ռոբերտ Քոչարյանի հարաբերությունները հասարակական գիտակցության մեջ համազոր են Վազգեն Սարգսյան-Ռոբերտ Քոչարյան հարաբերություններին: գ) ՀՀՇ-ում հաստատվում են նոր հեռացումներ, որոնք կդրսեւորվեն նաեւ «Հանրապետություն» խմբակցության մեջ: Տուգանային գծում է խմբակցության՝ հարաբերական նոր ընտրված նախագահ Բաբկեն Արարքցյանը, որը ՀՀՇ վարչությունում ընդդիմադիր դիրք ունի վարչության նախագահ Վանո Սիրադեղյանի հանդեպ: դ) «Երկրապահն» առայժմ խուսափում է սրել հարաբերությունները ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանի հետ:

Տես էջ 2



Իսթենդերունի ծոցում ՆԱՏՕ-ի լայնածավալ զորավարժություններ են սկսվում

ԱՆԿԱՐԱ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր Միջերկրական ծովի արեւելյան մասում Իսթենդերունի ծոցում, Թուրքիայի (համարյասախանաբար նաեւ Սիրիայի-«Ա») ափերից ոչ հեռու սկսվում են ՆԱՏՕ-ի այս տարվա խոշորագույն «Դայնեմիկ միկս-98» զորավարժությունները, որոնք կընթանան Թուրքիայում, Իտալիայում եւ Հունաստանում: Դրանց մասնակցում են Հյուսիսատլանտյան ուխտի անդամ 11 երկրների զինվորական ստորաբաժանումներ:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, զորախաղերի ընթացքում, որոնք ծրագրվում էին մեկուկես տարի, մասնավորապես կկատարելագործվեն ՆԱՏՕ-ի արագ հակազդման ուժերն Ուխտի հարավ-արեւելյան թեւի հնարավոր զինված հակամարտության պայմանական երջան տեղափոխելուն առնչվող խնդիրները: Զորավարժությունները կանցկացվեն երեք փուլով եւ կներառեն մարտական հրաձգություն Թուրքիայի տարածքում կայսերի քաղաքի երջանում: Զորավարժությունների թուրքական մասը կղեկավարի ՆԱՏՕ-ի միացյալ ցամաքային ուժերի Իզմիրում տեղակայված շտաբի հրամանատար, բանակի գեներալ Էդիփ Բաշերը:

Դիտորդներն ուշադրավ են համարում այն հանգամանքը, որ երկարատեւ ընդմիջումից հետո առաջին անգամ Հունաստանը մասնակցում է ՆԱՏՕ-ի զորախաղերին, որոնցում ներկայացված է նաեւ Թուրքիան:

ԱՅԵ

«Մենք ունենք իրավունք կամ ճանաչել Ղարաբաղի անկախությունը, կամ վերամիավորման խնդիրը դնել»

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՁԱՅՆ: «Մենք այսօր ունենք եւ իրավական, եւ պատմական իրավունք կամ ճանաչել Ղարաբաղի անկախությունը, կամ վերամիավորման խնդիրը դնել: բայց ոչ մենք եւ ոչ էլ Ղարաբաղը չենք փորձում առաջ տանել այդ հարցը: Բանակցությունները ընթացքի մեջ են եւ դրանց վրա չներազդելու համար մենք չենք օգտագործում այդ ուղիները: Բայց դա չի նշանակում,որ մենք հրաժարվում ենք այդ ամենից», սեպտեմբերի 27-ին Միացյալ Նահանգներում տեղի ունեցած 1,5 ժամանոց մամլո ասուլիսում ասել է ՀՀ նախագահը: Ռ. Քոչարյանը նշել է, որ Ադրբեջանն էլ իր հերթին պետք է բացառի Ղարաբաղն իր տարածքում իբրեւ ինքնավարություն պահելու գաղափարը: «Երբ դա ընդունվի. մենք կարող ենք սկսել բանակցությունները»:

Նյու Յորքում , գեներալ Արաշ Կարաբանուկյանի սուրբ ստանալիս

Ասուլիսում Քոչարյանը դեմ է արտահայտվել խորհրդարանը լուծարելու եւ վաղաժամկետ ընտրություններ նշանակելու առաջարկին, փաստելով, որ դա չի նպաստի կայունությանը: «Խորհրդարանը չի խախտել օրենքները, խորհրդարանն այս տարի արդեն 50 նոր օրենք է ընդունել», ասել է նա:

Գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի սպանության առնչությամբ նախագահը տեղեկացրել է, որ միակ չլուծված հարցը սպանության շարժառիթներն է վերաբերում եւ հերքել է սպանության կոնսպիրատիվ բոլոր վարկածները:

Ըստ նախագահի, երկխաղաղացիության հարցը կարող է լուծվել միայն 1 տարի հետո, քանի որ դրա համար անհրաժեշտ է լրամշակել Սահմանադրությունը: «Հաջորդ տարի ընտրվելիք նոր խորհրդարանի համար դյուրին կլինի ընտրություններից մի քանի ամիս անց քաղաքական շահարկումից զերծ սահմանադրական փոփոխություններ կատարել», ասել է Քոչարյանը:

ՀՀ նախագահի եռօրյա այցը Լոս Անջելես ավարտվեց սեպտեմբերի 28-ին կայացած ճաշկերույթ-հավաքույթով՝ ամերիկյան ականավոր քաղաքական դեմքերի, այդ թվում Կալիֆոռնիայի նախկին նահանգապետ Դոմինիկյանի եւ ավելի քան 750 հայ ու ամերիկացի գործարարների մասնակցությամբ: Իր ելույթը ընթերցելով անգլերենով՝ նախագահն անդրադարձել է Հայաստանի տնտեսական, քաղաքական, անվտանգության խնդիրներին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Հանրաքվեությունում տեղի է ունենում քաղաքական հենարանների փոփոխություն»

Հոկտեմբերի 1-ին նախագահական պալատում տեղի ունեցավ ՀՀ նախագահին առընթեր Քաղաքական խորհրդի գործադիր քարտուղար, ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանի առաջին ճեպազրույցը: Այս խորհուրդը, ինչպես հայտնի է, հակասական գնահատականների է արժանանում հասարակության մեջ, եւ նրա գործադիր քարտուղարն իր ճեպազրույցում եւս մեկ անգամ հատուկ ընդգծեց, որ այն «քաղաքական իշխանություն կրող չէ», զուտ խորհրդատվական մարմին է եւ ազատ է քննարկելու ցանկացած հարց՝ նախագահին այնուհետեւ երաշխավորություններ ներկայացնելու նպատակով: Խոստանալով, որ տրանից հետո ՔԽ յուրաքանչյուր նիստի ավարտին ինքը կհանդիպի չորրորդ իշխանության ներկայացուցիչներին եւ հանգամանալից տեղեկատվություն կտա քննարկված հարցերի ու ընդունված որոշումների մասին, «քանի որ ՔԽ անդամ ոչ մի կուսակցություն գաղտնի հարցեր քննարկելու մտադրություն չունի», Հրանտ Խաչատրյանը նկատեց, որ մինչեւ այժմ այդ չի արվել, քանի որ հիմնականում քննարկվել են կազմակերպական բնույթի հարցեր: Մասնավորապես, ստեղծվել են ՔԽ 6 հանձնախմբեր, ընտրվել եւ հաստատվել են դրանց մի մասի պատասխանատուները: Պրն Խաչատրյանը նկատեց, թե «Քաղաքական խորհրդի ստեղծումը Հայաստանում նախադեպ չի ունեցել... Ասեմ, որ աշխատանքների սկիզբը շատ լավ է, զգացվում են փոխադարձ համաձայնության գալու միտումները: Եվ, եթե անկեղծ լինենք, ապա այդ միտումները ոչ թե մեր անհատական ձգտումն են, այլ օբյեկտիվ իրականության, հասարակական պատվերի արտահայտություն: Նույն մարդիկ, որոնք վերջին 10 տարիներին եղել են ասպարեզում եւ միմյանց հետ ունեցել են սուր հակադրություններ, ունեցել են նույնիսկ թշնամական վերաբերմունք, այսօր օբյեկտիվորեն պարտադրված են նստելու մեկ սեղանի շուրջ եւ քննարկելու ազգային համաձայնության խնդիրները»: Պրն Խաչատրյանը փաստեց, որ ՔԽ եւ նրա ստեղծած հանձնախմբերի կազմը «վերջնական չէ»: Նախագահի հրամանագրով ՔԽ-ի կազմում, բացի ներկայիս 12 կազմակերպություններից, ընդգրկված էին նաեւ Հայկոմկուսը եւ ԱԺՄ-ն, «որոնք հետագայում հրաժարվեցին աշխատանքներին մասնակցելուց»: Ուստի Խորհուրդը հանձնարարել է պրն Խաչատրյանին՝ «խորհրդատվական հանդիպումներ ունենալ, նաեւ հասարակական կարծիք ստեղծել, որ Քաղաքական խորհրդում պետք է միասին աշխատեն, հարցեր քննարկեն հանրապետության բոլոր ազդեցիկ ուժերի ներկայացուցիչները»: Այս ելակետի հիմքն այն է, որ «իշխանության ձեւավորումը հասարակության պատասխանատվության խնդիր է, եւ ոչ թե առանձին անհատների կամ խմբերի, եւ եթե Հայաստանում իշխանության ձեւավորմանը մասնակցող ուժերը շարունակեն մնալ սպերում, ընդհատակում, ապա մեր ժողովուրդը երբեք չի կարողանա ձեւավորել այնպիսի իշխանություն, որը կհոգա նրա օրախնդիր հարցերը, առավել եւս կլուծի ապագայի խնդիրները»: Պրն Խաչատրյանը կարեւորում էր այն հանգամանքը, որ Հայաստանում գործող քաղաքական ուժերը պետք է ի վիճակի լինեն երկրում ստեղծել առանց բացառության բոլոր հուզող հարցերի քաղաքակիրթ քննարկման մթնոլորտ. «Եթե այս ամենը փորձենք ամփոփել, կտանանք մի բանաձեւ, որ Քաղաքական խորհրդի անդամ կուսակցությունների հիմնական խնդիրը ազգային համաձայնության սկզբունքների մշակումը եւ իրականացումն է»:



Անդրադառնալով օրվա նիստին, պրն Խաչատրյանը տեղյակ պահեց, որ այն նույնպես կազմակերպչական հարցեր է քննարկել: Հաստատվել են ներքին քաղաքական խնդիրների, ազգային անվտանգության հիմնադրույթների մշակման եւ քարոզչության կազմակերպման, հոգեւոր արժեքների եւ մշակութային քաղաքականության, սոցիալ-տնտեսական քաղաքականության, Արցախի եւ արտաքին կապերի, կրթության եւ երիտասարդության հարցերի հանձնախմբերը:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Հրանտ Խաչատրյանն ասաց, որ ՔԽ-ն մտադիր է «ուսումնասիրել ԱԺ-ում տիրող մթնոլորտը եւ նախագահին ներկայացվող մեղադրանքների ու պահանջների, ընտրությունների մասին օրենքի, նախորդ իշխանություններին քաղաքական գնահատական տալու» եւ բազմաթիվ այլ հարցեր: Լրագրողներից մեկի հարցադրման առթիվ, թե ունե՞ն, արդյոք, ներկա իշխանությունները քաղաքական հենարան, պրն Խաչատրյանը պատասխանեց, որ «Քաղաքական խորհրդում գերակշռող կարծիքն այն է, թե հանրաքվեությունում տեղի է ունենում քաղաքական հենարանների փոփոխություն»:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՏՕ-Հայաստան համագործակցությունը այլ երկրների դեմ ուղղվածություն չի ունենալու

Սկիզբը էջ 1

«Զվարթնոց» օդանավակայանից հյուրերն ուղեւորվեցին կառավարություն: Վարչապետ Արմեն Դարբինյանի հետ ունեցած երկարաեւ առանձնազրույցից հետո հակիրճ պատասխանեցին լրագրողների հարցերին: Սոլանան առանձնապես հետաքրքրական համարելով առանձնազրույցը, ընդգծեց, որ քննարկված հարցերը կարեւոր են ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ Հայաստանի համար: Հիմնականում առանձնացնելով Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները, նշեց, որ ներկա հանդիպումը կնպաստի հետագա հարաբերությունների առավել սերտացմանը: Առավել արդյունավետ համարեց գիտության, տեխնոլոգիայի արտակարգ իրավիճակների ուղղությամբ համագործակցությունը: ՆԱՏՕ-ի օգնությամբ Հայաստանը մտել է Ինտերնետ եւ եթե առաջանան արտակարգ իրավիճակներ, ապա կան կողային բոլոր հնարավորությունները եւ արվում է հնարավորինը առավել խորացնելու համագործակցությունը: Քննարկվել են նաեւ տարածաշրջանային խնդիրներ: Սոլանան գոհունակություն հայտնեց, որ ստեղծվեց հնարավորություն անձնապես լսելու ՀՀ վարչապետի տեսակետը, այն հատկապես տարածքային խնդիրների առումով համարեց շատ իրատեսական, նշելով, որ պետք են ՆԱՏՕ-ի աջակցությունը գտնելու ելքեր տարածաշրջանի շատ խնդիրների լուծման համար: Քննարկվել են նաեւ առեւտրատնտեսական, տրանսպորտի ոլորտներին առնչվող հարցեր: Գլխավոր քարտուղարն իր գոհունակությունը հայտնեց «Սեսախի ճանապարհի» Հայաստանի իրատեսական նախաձեռնության վերաբերյալ: «Ես մեծ համակրանքով եմ նայում այն աշխատանքին, թե ինչ է արվում այս ուղղությամբ եւ ուզում եմ կրկին նշել, որ մեծ բավականություն ստացա ծանոթանալով ՀՀ վարչապետի հետ»: Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման վերաբերյալ հնչած հարցին ի պատասխան Սոլանան նախընտրեց առավել չմանրամասնել՝ ընդգծելով, որ քննարկվել են տարածքային բոլոր խնդիրները:

Իր հերթին վարչապետ Արմեն Դարբինյանը իր գոհունակությունը հայտնեց հանդիպման վերաբերյալ, նշելով, որ ընձեռվեց հնարավորություն ներկայացնելու Հայաստանի տեսակետը՝ տարածաշրջանի համագործակցության եւ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների վերաբերյալ: «Ուրախ եմ, որ մենք նույն տեսակետին ենք հարաբերությունների ընդլայնման եւ զարգացման առումով: Համագործակցությունը որեւէ ուղղվածություն չի ունենալու ի հակառակ այլ երկրների եւ պետք է ստեղծել համագործակցության այնպիսի դաշտ, որը հնարավորություն կտա Հայաստանին ներկայացնելու գիտական, տեխնոլոգիական եւ այլ նկատառումներն այս համագործակցության տեսանկյունից: Կարծում եմ, որ համագործակցությունը եւ հարաբերությունները ապագայում կլինեն շատ ավելի լուրջ», ընդգծեց ՀՀ վարչապետը:

Գլխավոր քարտուղարը կհանդիպի ԱԺ նախագահին, այցելելու է պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտ, իսկ այսօր ՀՀ նախագահին եւ արտգործնախարարին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ներկուսակցական պարզաբանումներ

Սկիզբը էջ 1

Հրապարակավ հրաժարիմք

Երեկվա ճեպազրույցները նշանավորվեցին «հրաժարիմքների» շարքով: Նախ Վիգեն Խաչատրյանը, որը Բաբկեն Արարքցյանի փոխարեն կանգնեց ամբիոնի առջեւ, փորձեց հերքել, թե Վանո Սիրադեղյանը պաշտպանում է «Երկրապահի» ընտրական օրենսգրքի տարբերակը: Նա հայտնեց՝ ընկերական զրույցի ընթացքում Վանո Սիրադեղյանն ասել է, որ իրեն ծիծաղ չեն հասկացել՝ ինքն ուզեցել է նշել. «Ես դեմ չեմ, որ փոխադարձ ընդունելի տարբերակ լինի»: Բացի ընկերական զրույցի հիշատակումից, Վիգեն Խաչատրյանն այլ փաստարկ չբերեց: Այնուհետեւ պատասխանելով լրագրողների հարցին, թե համաձա՞յն է արդյոք «Հանրապետություն» խմբակցությունը Ստրասբուրգ բողոքի նամակ ուղարկելու Բաբկեն Արարքցյանի դիրքորոշման հետ՝ Վիգեն Խաչատրյանն ասաց, որ դա Բաբկեն Արարքցյանի անձնական նախաձեռնությունն է, նա չի խորհրդակցել խմբակցության հետ: Մանրամասնենք, որ այս նամակով Բաբկեն Արարքցյանը, «Երկրապահ» խմբի նախագահ Սմբատ Այվազյանի խոսքերով, «տղա էր բերում» Հայաստանի վրա, կամ կրկնում Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի միամիտ հերոս Արքին պարոնին, որը իր հայրենիքում ճշմարտություն որոնելու փոխարեն՝ փորձում էր այն գտնել ռուսաց թագավորի, տվյալ դեպքում՝ Եվրախորհրդի եւ Եվրախորհրդարանի ներկայացուցիչների մոտ: Հովհաննես Իգիթյանին Եվրախորհրդարանում Ազ պատվիրակությունը գլխավորելու կարգավիճակից զրկելը եւ նրա փոխարեն իշխանամետ համարող «Բարեփոխումներ» խմբի նախագահ Արմեն Մարտիրոսյանին նշանակելը, Բաբկեն Արարքցյանը գնահատել է որպես ընդդիմադիր փորձաքննության իրավունքների կոպիտ ոտնահարում:

ԱԺՄ խմբակցության դիրքորոշումները պարզաբանում էր Շավարշ Քոչարյանը, որին դարձյալ ուղղվեց Դավիթ Վարդանյանի նոր պաշտոնին վերաբերող հարցը՝ արդյոք նախագահ Ռոբերտ Քոչարյանը գտե՞լ է արմատական ընդդիմադիրներին լռեցնելու ձեւը: Շավարշ Քոչարյանն ընդգծեց, որ Դավիթ Վարդանյանի համաձայնությունը նշանակվելու նախագահին առընթեր վերահսկողական ծառայության ղեկավար, յուրօրինակ փորձություն է կամ փորձ: Եթե պարզվի, որ հանրապետությունում կատարված աղտոտությունների բացահայտման աշխատանքը նույնպիսի իմիտացիա է, ինչպիսիք են սահմանադրական փոփոխությունները, քաղաքական խորհուրդը, ապա... Շավարշ Քոչարյանն այստեղ նախադասությունը չավարտեց, բայց փաստեց, որ ԱԺՄ-ի համար կարեւորն արդյունքն է: Ի պատասխան «Ազգի» հարցի, թե կառավարության կազմի բարձրաձայն հայտարարվող մոտալուտ փոփոխությունները ի՞նչ հիմքեր ունեն, Շավարշ Քոչարյանն ասաց, որ դրանք համապատասխանում են ավտորիտար պետության խաղի կանոններին, ուր կառավարության ձեւավորումն արդյունք է. ա) անձնական նվիրվածության, բ) ազդեցիկ կլանների սպերային պայքարի: Այդ պայքարի արդյունքում էլ հաստատվում է գործադիր իշխանության որեւէ կազմ: Եթե կլանների ուժերի հարաբերակցությունը փոխվում է, ապա վերանայվում է կառավարության կազմը: Ժողովրդավարական պետություններում կառավարության կազմը պետք է արտահայտի խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի կամքը: Հայաստանում դա առայժմ անհնար է:

«Երկրապահ» պատգամավորական խմբի նախագահ Սմբատ Այվազյանն իր խոսքը սկսեց «ՀՀ» օրաթերթում Կարմեն Դավթյանի հարցազրույցում իրեն վերագրված մտքի հրաժարումից: Նա դիվանագիտորեն ասաց, որ ինքը չի ասել, թե անվստահություն կա հանրապետության նախագահի հանդեպ, «Երկրապահը» վստահում է նախագահի ծրագրին, բայց եթե այդ ծրագիրը չիրականացվի, ապա, կարծում եմ, որ ժողովրդի մեջ կարող է հասունանալ անվստահությունը: Սմբատ Այվազյանը հրապարակավ նշեց նաեւ, որ չորեքշաբթի խորհրդարանի դահլիճից, ինչպես նաեւ հեռուստատեսության եթերից հնչած Հովի. Ահարոնյանի պաշտոնական հարցումը ՆԳ, ԱԱ նախարարին, թե «Երկրապահ» կամավորական միության երեւանի մասնաճյուղի նախագահ Հակոբ Հակոբյանի (Լեդի Հակոբ) տանը կատարված խուզարկությունը ի՞նչ իրավական հիմքեր եւ հետեւանքներ կարող է ունենալ, ոչ թե ամբողջ «Երկրապահ» պատգամավորական խմբի անունից է ձեւակերպված, այլ նրա 21 անդամների: Ս. Այվազյանը կատարվածը մեղմորեն «թյուրիմացություն» կոչեց, բայց չմոռացավ շեշտել, որ «Երկրապահի» համենայն դեպս 21 անդամների՝ ներառյալ իրեն, հետաքրքրում է. «Ի՞նչ մթնոլորտ է ձեւավորվում հանրապետությունում՝ պետության հանդեպ մեծ վստահություն ունեցողների վերաբերմամբ», ինչպիսին Հակոբ Հակոբյանն է:

«Երկրապահ» պատգամավորական խումբը հատուկ անդրադարձավ երկուշաբթի կայանալիք արտահերթ նիստին: Խմբի նախագահը պաշտոնապես նշեց, որ իրենք պատրաստ են ցանկացած քայլի, եթե սեփականաշնորհման որեւէ գործարքում կան անօրինականության հիմքեր, ուստի նրանք համաձայնել են «Հանրապետություն» խմբակցության, ԱԺՄ-ի եւ Հայկոմկուսի նախաձեռնած արտահերթ նիստին, ուր կքննարկվեն «Կոնյակի», «Արմենիա», «Անի» հյուրանոցների եւ «Հայկական ավիաուղիներ» ընկերության դուրսբերումը 1998-2000 թթ. սեփականաշնորհման ցանկից:

Հիվանդության պատճառը ջրմուղի ցանցի վթարային վիճակն է

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արմենպրեսն արդեն հաղորդել է, որ Գեղարքունիքի մարզի Կարմիր գյուղում նկատվում է աղիքային հիվանդությունների բռնկում:

ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ եւ հակահամաճարակաբանական հսկողության պետ Արտեմ Վանյանը, որը հենց նոր էր վերադարձել այնտեղից, պարզություն մտցրեց ստեղծված իրավիճակում: Նրա ասելով, գյուղում վերջին երկու ամսվա ընթացքում աղիքային հիվանդություններով 60 մարդ է հիվանդացել, որոնցից 8-ի մոտ եղել է դիզենտերիա: Պատճառը ջրմուղի ցանցի վթարային վիճակն է: Գյուղում արդեն գործում են համաճարակաբանների, ինֆեկցիոնիստների, կոմունալ տնտեսության աշխատողների բրիգադներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Ռաֆֆի Հովհաննիսյանի գործունեությունը՝ թվերով

Երեկ տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության հանրային կառույցի բաժնի վարիչի դասընթաց մեկ օրաթ առաջ վերականգնված Տիգրան Պասկեւիչյանի մամուլի ասուլիսը: Այն նվիրված էր հիմնադրամի տնօրենի դասընթացավար Ռաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականի հարցի շուրջ հայաստանյան մամուլում երեւան եկած բազմաթիվ հրապարակումներին ու արծարծված տեսակետներին: «Հիմնադրամի գործադիր վարչությունը, ընդգծեց դրն Պասկեւիչյանը, նպատակահարմար է գտնում տալ որոշ դասընթացավարական դարգաբանումներ, նկատի առնելով, որ ցանկացած հրապարակում ի վերջո արձագանք է գտնում սփյուռքում եւ հարկ է, որ թե Հայաստանի, թե սփյուռքի հայությունը ստահող ու անհեթեթ տեղեկատվության կողքին հնարավորություն ունենա տեսնելու ճշմարտությունը»:

Ո՞րն է դա ըստ դրն Պասկեւիչյանի:

Ռաֆֆի Հովհաննիսյանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի դասընթացավար է աշխատել 133 օր, որից 52-ն անց է կացրել գործուղումներում, այցելելով 12 երկիր: Այդ ընթացքում անձամբ ինքը գործուղման գումարներից ծախսել է 15 հազար 220 ԱՄՆ դոլար, Ներսես Մկրտչյանը, որը նախապես գնացել է մի քանի երկիր՝ դրն Հովհաննիսյանի այցերը նախապատրաստելու, ծախսել է 3220 դոլար: Իր աշխատանքի կարճ ժամանակաընթացքում դրն Հովհաննիսյանը «արել է այլ չիմնավորված ծախսեր եւս» 10 հազար 300 դոլարով ձեռք է բերվել ԳԱԶ-31 մակնիշի նոր ավտոմեքենա իր համար, «թեեւ նախկին տնօրենի մեքենան կար եւ շատ լավ վիճակում էր», 9300 դոլարով գնվել է համակարգչային տեխնիկա, թեեւ «հիմնադրամի համակարգչային պարկը լիովին բավարար էր», ձեռք է բերվել 3400 դոլարի դասընթացավարող տեխնիկա, 500 դոլարով տեղադրվել է արբանյակային անտենա, 8000 դոլարով հրատարակվել է 200 հազար տարանակ ունեցող գովազդային գրքույկ, 9900 դոլարի «չնախատեսված» ծախսագրված է վճարվել աշխատակիցների թվաքանակը 26-ից 34-ի հասցնելու դատճառով, մի խոսքով, դրն Հովհաննիսյանը անհիմն շռայլել է մոտ 60 հազար դոլար:

Ասուլիսը անցկացնողը պնդում էր, կանաբար, դիտի փոխանցվեր հիմնադրամի հաշիվներին»: Այսինքն, ոչ «սառեցում» է եղել, ոչ էլ «աղասառեցում»: Ինչ վերաբերում է մյուս 1 մլն-ին, «աղա դրանից 625 հազար դոլարի դայմանավորվածությունները նույնպես ձեռք էին բերվել դեռեւս 1997 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, Մանուկակ Պետրոսյանի տնօրենության շրջանում, կոնկրետ ծրագրերի համար, որոնք իրականացվել եւ իրականացվում են»:

Դրն Պասկեւիչյանը հերքեց նաեւ հիմնադրամի «քաղաքականացվածության» եւ Ռաֆֆի Հովհաննիսյանի «արեւմտյան աշխատաոճի» վարկածները, նշելով, որ այդ ամենն արվում է «Ռաֆֆի Հովհաննիսյանի հեղինակությունը փրկելու համար»:

Իհարկե, դրն Պասկեւիչյանի բերած փաստերին ու մեկնաբանություններին հարկ է վերադահությամբ մոտենալ: Ռ. Հովհաննիսյանի դասընթացավարության շրջանում նա ինքնահայտնվեց «տուժող վիճակում» եւ հայտնի է որդես գործադիր վարչության նախկին տնօրեն Մանուկակ Պետրոսյանի լոբբիստական դաշտի ձեւավորողներից մեկը, որի կարծիքը չի կարող ձերբազատ լինել սուբյեկտիվիզմի տարրերից, օրինակ նրա պնդումը, թե հիմնադրամը քաղաքականացված հիմնարկ չէր: Համենայն դեպս, նկատի ունենալով, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը համակրանքի արժանացած մարդ է հանրության մեջ, ուրախ դիտի լինեինք, եթե նա հանդես գար իրեն ուղղված այս մեղադրանքների մասին դարզաբանումներով: Ի դեդ, դրանցից ամենածանրն այն էր, թե «հիմնադրամում մեկի քառամսյա ծախսդությունը դատճառաբանելու համար ամեն ինչ հողին հավասարեցնելն առնվազն անբարոյականություն է, եթե ոչ վնասարարություն...»:

Արդյո՞ք այդ մարդն է Ռաֆֆի Հովհաննիսյանը:

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇՈՒԿԱ

Հոկտեմբերի 1-ից գործում է «Հարկերի մասին» օրենքի 22-րդ հոդվածը

Գործարարներ եւ հարկային տեսուչներ

Կառավարությունը վերջերս ընդունեց եւ փորձեց հայաստանյան գործարարների հետ քննարկել «Հարկերի մասին» օրենքի 22-րդ հոդվածի կիրառման կարգը, որը յուրօրինակ կոչախնձոր է գործարարների եւ հարկային տեսուչների միջեւ, որովհետեւ վերաբերում է հարկային տեսուչների կողմից հարկատուների հարկային դարտավորությունները անուղղակի հաշվարկելու դեդքերին: Հոդվածի սկզբում նշված է, որ հարկային տեսուչները իրավասու են հարկատուների հարկային դարտավորությունները վերահաշվարկել ինքնուրույնաբար, եթե հարկատուների ներկայացրած դաշտոնական փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծումներ եւ սխալներ:

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանը, ինչպես նաեւ հարկային տեսչության դետ Արշաշես Թումանյանը մի շարք հանդիդումներ կազմակերդեցին հայաստանյան գործարարների հետ, նշելով, որ կառավարությունն այլեւս չի կարող հանդուրժել տնտեսության ստվերայնությունը, որն արտահայտվում է հարկային դարտավորություններից դարբերաբար խուսափելու եւ իրական հարկային դարտավորությունների երբեմն չնչին մասը դետքյուջե վճարելու անբանուց ձեւով: Գործարարները ներկայացրին հակադարձ փաստարկներ՝ հարկային տեսուչների օրինազանցության եւ իրենց լիազորությունների գերազանցման դեդքերի վկայակոչմամբ:

«Երկրադահ» դատգամավորական խումբը, որի կազմում բավական մեծաքիվ գործարարներ կան, եռանդուն զբաղվում է կառավարության այս որոշման վերլուծությամբ՝ նախազգուշացնելով այս կարգի կիրառման հետեւանքների մասին: «Երկրադահ» դատգամավորական խմբի նախագահ Սմբատ Այվազյանը եւ խմբի անդամ Հերմինե Նաղդալյանն «Ազգին» հայտնեցին, որ վերջերս տեղի է ունեցել իրենց եւ գործարարների հանդիդումը վարչադետ Արմեն Դարբինյանի հետ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են գործարարների մտահոգությունները, դայմանավորվածություն է ձեռք բերվել կարգը կիրառել նախ տնտեսության առանձին ոլորտներ՝ վերաբերմամբ, զորօրինակ՝ հացի, ադդյունները ստուգելուց հետո անցնել ընդհանուր գործունեության. «Կա լուրջ խնդիր, մենք իրավունք չունենք անտեսել ստվերային տնտեսության ամրացումը, բայց միաժամանակ, կողմ լինելով ստվերային տնտեսության դեմ դաժան դայքարին, դետք է չվնասել տնտեսական ակտիվությանը: Իսկ մենք մտահոգված ենք, որ 22-րդ հոդվածի կարգի կիրառումը կարող է ազդել տնտեսական ակտիվության վրա», ասաց Սմբատ Այվազյանը: Հերմինե Նաղդալյանը մանրամասնեց, որ դայմանավորվածություն է ձեռք բերված նաեւ գործարարների եւ ձեռներեցների հետ հարկային տեսչության աշխատակիցների կողմից իրենց լիազորությունները գերազանցելու յուրաքանչյուր դեդք եւ փաստ ի բեռ տեղեկացնելու, որդեսզի համատեղ ջանքերով կառավարության հետ մեկտեղ ե՛ւ հաղթահարվի տնտեսության ստվերայնությունը, ե՛ւ զարգանա ձեռներեցությունը:

Ն. Գ.

Արեւելյան ազգին՝ արեւելյան խաղրավենիք

Խանութներից ու շուկաներից խորհրդային հրուշակեղենի (որը մեր դատկերացման մեջ մնացել է 70 կոդեկանոց մոսկովյան թխվածքաբլիթների տեսքով) անհետացումից հետո Հայաստանի շուկան սկսեցին գրավել իրանական եւ թուրքական խաղրավենիքները: Դրանք նորություն էին ռուսականացված մեր խոհանոցի համար եւ աստիճանաբար նորից մտնում են մեր կենցաղի մեջ: Սուրիացիների հրավերով Դուբայից Հայաստան է եկել արաբական աշխարհում հայտնի Դաղերների ընտանիքը, որի «Սիսայդ» ֆիրմայի խաղրավենիքը հաջողությամբ սդառվում է աշխարհում հայտնի խանութների, ռեստորանների եւ արծարանների ցանցում: Ծանոթանալով հայկական շուկային, հայերի խոհարարական ավանդույթներին, ֆիրման «ՍԻԼ» կոնցեռնի հետ վերջերս հիմնել է «ՍԻԼ սուիտ» հայ-արաբական համատեղ ձեռնարկությունը՝ 50/50 համամասնությամբ: «ՍԻԼ սուիտ»-ը արտադրում է մոտ 20 տեսակի խաղրավենիքներ իրենց հատուկ անուններով՝ բակլաուա (փախլավա), կամ՝ «ֆոլ ու ըղոորդ», որը հայերեն թարգմանվում է «կեր եւ շնորհակալ եղիր»: Ի դեդ՝ խաղրավենիք դատրաստող վարդեստները ազգությամբ արաբներ են, արտադրանքի հումքը՝ արեւելյան, հատուկ համեմունքները, դիստակը, կտավատը, տարբեր տեսակի ընկույզները ներկրվում են Դուբայից, Սիրիայից ու Լիբանանից: Լայն դահանջարկի դեդքում «ՍԻԼ սուիտ»-ի արտադրանքը կիրացվի հենց ֆիրմայի խանութներում, շուտով կմտնի նաեւ «Պիցցա դի ռոմա»-ների ճաշացուցակի մեջ:

Երեկ «Ռոյալ Քլաբում» ձեռնարկության առաջին արտադրանքի համտեսին «ՍԻԼ սուիտ»-ի երեւանյան ներկայացուցիչ Սիմեն Դաղերը տեղեկացրեց, որ ձեռնարկության հիմնումը իրենց առաջին քայլն է Հայաստանում, երկրորդ քայլը թերեւս կլինի արաբական ռեստորանի հիմնումը Երեւանում (ի դեդ, արաբական ռեստորանները ներկայումս մեծ համարում ունեն եվրոդական երկրներում), որը կլինի երկրորդ արեւելյան ռեստորանը չինականից հետո: «ՍԻԼ սուիտ»-ը, փաստորեն, «ՍԻԼ գրուդի» փոքր բիզնեսում առաջին ձեռնարկներից մեկն է: Այդ առնչությամբ կոնցեռնի նախագահ Խ. Սուրիայանը հայտնեց, որ իրենք մտադիր են զարգացնել փոքր ու միջին բիզնեսը, քանի որ այն մեծ հեռանկար ունի Հայաստանի նման փոքր երկրի համար, միաժամանակ, սակայն, չմոռանալով ավելացնել, որ ներկայումս փոքր ու միջին բիզնեսով զբաղվողները Հայաստանում ամենաճնշված խավն են բոլոր առումներով: Նա տեղեկացրեց, որ «ՍԻԼ սուիտ»-ին կհաջորդի հայ-ամերիկյան «Զովք» համատեղ ձեռնարկությունը, որտեղ առայժմ կարտադրվի մանգոյի բնական հյութ, իսկ գործերը հաջող ընթանալուց հետո նաեւ հայկական մրգահյութեր՝ ծիրանից ու այլ մրգերից:

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հանդիսությունների շահանդես եւ անակնկալներ հոկտեմբերի 10-ին

Սկիզբը էջ 1

Տոնական նախադատրաստություններ՝ շրջանակում վերակառուցվել է երեքունու միջնաբերդը, համայնքներում իրականացվել եւ շարունակվում են բարեկարգման տարբեր աշխատանքներ, սկսած փողոցների, կամուրջների վերանորոգումից մինչեւ գիշերային լուսավորության խնդիրներ: Այդ ամենը «շուք կտա տոնակատարությանը»՝ դառնալով քաղաքի սեփականությունը: Իսկ եթե հաջողվի ավանդական դարձնել տոնակատարությունը, բարեկարգման շահանդեսի, մրցույթի դեմ մի բան կսկսվի համայնքների միջեւ, որից կշահի (նաեւ) երեւանցին, իր խանդավառությունը հաճույքով լուսաբանողներին փոխանցեց քաղաքաքեսը: «Տոնի հետ կապված այնքան լավ տրամադրության մեջ եմ, որ դատրաստ եմ բոլորին ներել եւ բոլորից ներողություն խնդրել», ասաց նա՝ նկատի առնելով այն «բուդկայատերերին», որոնց կարգուկանոն հաստատելու բերումով դառնացնելու առիթ է ունեցել՝ անեծքների արժանանալով: (Ասուլիսից հետո, ձայնագրիչների անգործության շնորհիվ լուսաբանողների հետ տարաբաց զրույցի ընթացքում դրն Աբրահամյանը հոգոց հանեց. «Քաղաքը հիվանդ է, բուժման կարիք ունի. ո՞ր հիվանդն է իր բժկին սիրում»:

Տոնակատարությունը կսկսվի հոկտեմբերի 9-ին՝ հանդիսավոր նիստով, որ կբացի քաղաքաքեսը, եւ կավարտվի համերգային ծրագրով: Սակայն տոնական արարողությունների «գլխավոր մուտքը» կլինի հոկտեմբերի 10-ին, ժամը 11-ին «Երեքունի» թանգարանում նախատեսված թատերականացված տոնահանդեսը մասնակիցների ռեկորդային թվով (1200), որին կհաջորդեն «համատարած տոնական միջոցառումներ» բոլոր համայնքներում: Ժամը 16-ին Շահումյան հրապարակից կմեկնարկի հնաոճ եւ ինքնաշեն ավտոմեքենաների շքերթը, ժամը 17-ին, Ազատության հրապարակում «Հին աշխարհը եւ մենք» մանկական երաժշտական տոնահանդեսը: Տոնական միջոցառումների հաշվեկշռում դատվավոր տեղ կգրավի «Հազդան» մարզադաշտում ժամը 18-ին սկսվելիք Եվրոդայի առաջնության Հայաստան-Իսլանդիա ֆուտբոլային հանդիդումը: Վերջինիս կիսաջորդի ժամը 19-24-ը ծրագրված զանգվածային երիտասարդական դիսկոտեկը Հանրադետության հրապարակում, որի մասնակիցներն ակնատես կլինեն երեւանյան երկնակամարում փայլատակած ամենահրաշալի հրավառություններից մեկին եւ բազմաթիվ անակնկալների (քաղաքաքեսը, բնականաբար, չբացեց փակագծերը):

Տոնական հանդիսություններին հրավիրված են բազմաթիվ հյուրեր սփյուռքից, նախկին ԽՍՀՄ երկրներից եւ հեռավոր արտասահմանի տարբեր քաղաքներից (այսօր տդասվում է ժնեւի քաղաքաքեսի ժամանումը), եթե քաղաքական իրավիճակը չխանգարի, ենթադրվում է նաեւ Մոսկվայի քաղաքաքեսի ներկայությունը: Ամեն ինչ հաշվարկված ու նախատրատրաստված է, հավատանք քաղաքաքեսը, «միայն երկու հարցում Աստծո օգնությունն ենք ակնկալում. եղանակը եւ Հայաստան-Իսլանդիա խաղում Հայաստանի հաղթանակը»: «Աստծո հետ բանակցություններ ենք վարում, ինչով կավարտվի՝ հոկտեմբերի 10-ին կերեւա», կատակեց նա՝ խնդրելով իր տոնական տրամադրությանն անհարիր հարցեր չտալ եւ, ամենահաճո հարցը կանխելով, արձանագրեց. բյուջեից ոչ մի կոդեկ չի ծախսվել, ամեն ինչ արվել է «Երեւան» հիմնադրամի կամավոր մուտքերի հաշվին, որոնց հեղինակների ցանկը կհրադարակվի (բարեգործների ցուցակում առաջնային դիրքերում են երեւանյան բանկերը): Որքան գումար է հավաքվել «Երեւան»-ում եւ որքան կարժենա տոնակատարությունը, քաղաքաքեսը դժվարացավ դատասխանել, ասելով՝ քնարական կազմակերդություններից շատերն աշխատում են անվճար, խոշոր օժանդակություն է ցուցաբերել ՆԳ նախարարությունը, որի վաստերից մեկն այսօր էլ շարունակում է վերանորոգման աշխատանքները: Ստեղծվում է ալբոմ նվիրված Երեւանին, ֆիլմ, որի հատույթներով քաղաքաքեսարանը հույս ունի մասամբ լրացնել հիմնադրամի «բացերը»: Ի դեդ, «Երեւան» հիմնադրամի հաշվեհամարն է. «Կոնդիս Երեւան» բանկ, 187006276005:

Տոնական տրամադրությանն անհարիր հարցեր, այնուամենայնիվ, հնչեցին՝ հիմնականում լուսաբանողների բնակավայրերին հարող տարածքների անբարեկարգության վերաբերյալ: Ամենաանհախնդիր հարցը, որի հեղինակը «Հայոց աշխարհն» էր, առնչվում էր Նալբանդյան 130 հասցեում ստեղծված «կոնֆլիկտին»: (Տեղեկությունների համաձայն, ՆԳ եւ ԱԱ նախարարության վերադարձման բաժանմունքի տարածքի ընդարձակման նպատակով բակի բնակիչների վերաբնակեցումն ուժային եղանակներ է ստանում): Դրն Աբրահամյանի կարծիքով, նշված տարածքը դատմական արժեք չի ներկայացնում, եւ վերաբնակեցումը կատարվում է օրինականության սահմաններում:

Սակայն, քանի որ առջեւում երեւանցիների համար նվիրական եւ վերջին տարիներին ցավագիտորեն մոռացված տոնակատարությունն է, հրապարակումն ավարտենք երեւանի քաղաքաքեսի բարեմաղթանքով. «Թող Երեւան-2780-ը մարդկային հարաբերությունների որակական նոր փուլի սկիզբ դառնա». փոխադարձ կշտամբանքներից եւ քունոց փոխհարձակություններից բոլորս հոգնել ենք...

digitised by A.R.A.R.@

ՀԱՅ ԴԱՏ

Նախիջեւանը մոռացության զոհ

Ես բնավ չեմ կասկածում, որ հայ ռազմաքաղաքներն անդայման կուսումնասիրեն եւ կլուսաբանեն Հայաստանի գրողների միության սակավ հայտնի դերը մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի մեջ: Կարծում եմ, արխիվներում պահվում են մեր կուսակցական եւ ոչ կուսակցական ժողովների արձանագրությունները, գրողների ելույթների տեքստերը, պարբերականներում լույս տեսած հոդվածները, մասնավոր հրատարակությունները եւ մյուս բոլոր բաները: Հիշում եմ, օրինակ, 1987 թ. հունիսի սկզբներին գրողների տանը կայացած հերթական ժողովում մենք հարց առաջադրեցինք, որ հարկավոր է Նախիջեւանի եւ Ղարաբաղի հայ բնակչության երջանում հանրաքվե անցկացնել պատմական հայկական մարզերը Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ: Երբեք չեմ մոռանա, որ բոլոր ելույթ ունեցողները գրեթե առանց բացառության համերաձխորեն ընդգծում թե ուշադրություն դարձնենք աշխարհի քարտեզին, գրում է նա, ապա կտեսնենք, որ ոչ մի տեղ այնքան շատ չեն հանդիպում «Նուգի» (Նոյի) հետ կապված անվանումներ, որքան Ադրբեջանում եւ հատկապես Նախիջեւանում»: Եվ որպես ապացույց բերվում են «Նեխրամ», «Նուխբաթան», «Նուխաջիր» օրինակները: Ի դեպ, այն ժամանակ ես արձագանքեցի ադրբեջանցի «բանասերի» աշխատությանը, «Սովետսկայա Նախիչեւանի» խմբագրություն ուղարկելով նամակ, որտեղ ընդգծվում էր. «Ես կարող եմ անվերապահորեն ընդունել ձեր հեղինակի գաղափարը, բայց միայն մեկ պայմանով. եթե դուք համաձայնեք, որ ասենք Հոմերոսը հայ է, մանավանդ որ գիտնականները մինչեւ օրս վիճարկում են այդ խոշոր հեղինակի իրական հայրենիքի հարցը: Քանզի, եթե ուշադրություն դարձնենք աշխարհի քարտեզին, ապա կտեսնենք, որ բացի Հայաստանից եւ հատկապես Ղարաբաղից, ոչ մի տեղ այնքան չեն հանդիպում «Հոմերոսի» (ռուսերեն Գոմերի) հետ կապված անվանումներ. «Հարությունագոմեր», «Ալեքսանագոմեր», «Անդրանիկագոմեր», «Չաուշագոմեր», «Նժդեհագոմեր» եւ այլն»: Ես վստահ էի, որ հասցեատերերը չեն հասկանա, որ իմ հեգնանքը կարող է ճիշտ հնչել միայն ռուսերեն, քանզի «Իլիականի» եւ «Ոդիսականի» հեղինակի անունը հայերեն այլ կերպ է հնչում: Բայց գաղտնիք չէ, որ ցանկության դեպքում կարելի է ուրիշ, առավել անվիճելի փաստարկներ գտնել «սեփական» պատմությունը հնացնելու եւ ուրիշի արժեքները յուրացնելու համար: Թուրքն ամեն ինչ կհանդուրժի, միայն թե ավելի շատ լինեն երկչոտ հայերը, որոնք լուռումունջ կուլ կտան թուրքերի պատրաստած դառը հաբերը:

Ճիշտ է, ադրբեջանցիներին միայն թվում էր, թե հայերը երկչոտ են եւ մեկընդմիշտ համակերպվել են «զոհի համախտանիշի» հետ: Ադրբեջանցիները չէին էլ կասկածում, որ խորհրդային իշխանության տարիներին իրենք ձեռք են բերել «սեփական» յուրահատուկ հիվանդություն, որը ես կանվանեի «ինքնախաբեության համախտանիշ»: Քանզի իրոք ինքնախաբեությամբ է զբաղվում նա, ով կարծում է, թե կարելի է ստրկացնել մի ամբողջ ժողովրդի: Ի դեպ, դրանում համոզվեց Բակուր Կարապետյանը, երբ Հայաստանի գրողների միության առաջադրանքն էր կատարում հայկական պատմական հուշարձաններով զերազանցած Նախիջեւանում երջագայելիս: Չնայած հայկական բնակավայրեր այցելելու արգելքներին, Բակուրը հետագայում ընթերցողներին պատմեց ոչ միայն գործուղման ընթացքում իր ունեցած ապրումների մասին, այլեւ հայկական հողում ադրբեջանցիների բացահայտ վանդալիզմի փաստերի մասին: «Նախիջեւանի «Թերիզ» հյուրանոցի հենց առջեւում, գրում էր Բակուրը, դրված են Հին Ջուղայից բերված հայկական ազգային մշակույթի եզակի նմուշներ: Դրանք խեղված են եւ այլանդակված: Հայերեն մակագրությունները ջնջված են: Գավառագիտական թանգարանում չկար հայկական ոչ մի ցուցանմուշ, թեեւ ես տեսել էի, թե Նախիջեւանի երջակայքում այլի առաջ ինչպես են ոչնչանում հայոց պատմության եւ մշակույթի հարյուրավոր անչափ արժեքավոր հուշարձաններ: Ագուլիս քաղաքում հրաբոմբ պահպանվել են 12 գմբեթազուրկ եւ այլանդակված քրիստոնեական եկեղեցիներ: Մի քանիսում պահվում են բունտիմիկասներ, մյուսներում անասուններ: Քաղաքակիրթ աշխարհի այլի առջեւ կործանվում են համաշխարհային քրիստոնեական քաղաքակրթության իսկական գլուխգործոցներ»:

Կիրառվում է այսպես կոչված սոիտակ ցեղասպանության տիպիկ թուրքական եղանակը. սկզբում ոչնչացնելով այս կամ այն ժողովրդի ազգային մշակույթի կենդանի փաստերը, այնուհետեւ ստեղծելով անտանելի կենսապայմաններ, որոնց հետեւանքով բնիկները ստիպված լքում են հարազատ օջախները, հայրենիքը: Բարբարոսները ու վանդալները անչափ լավ գիտեին անանց ճշմարտությունը. «Երբ լռում են առասպելները, ասքերն ու երգերը, հնի մասին վկայում է ճարտարապետությունը»: Եվ հայերին հարազատ հողից արտաքսելով այնպիսի ահավոր զենքերով, ինչպիսիք էին լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, խորհրդային սահմանային ռեժիմը, հայկական հողից դուրս մղելով ոչ միայն դրա տերերին, այլեւ հենց «առասպելները, ասքերն ու երգերը», նրանք վերակառուցման եւ քաոսի պայմաններում վերջնականապես ծեռնամուխ եղան ճարտարապետական կոթողների ոչնչացմանը:

Այդպիսով նրանք հույս ունեն վերջնականապես հաստատվել ուրիշի տանը, սեփականացնելով ոչ միայն ուրիշի հողը, մեղեդիները, խոհանոցը, պատմությունը, այլեւ նույնիսկ առասպելական Նոյին, միաժամանակ նոր անբարեհունչ անուն տալով բիբլիական Արարատին: Զբաղվելով բացահայտ ինքնախաբեությամբ, Թուրքիան եւ Ադրբեջանը նոր սերնդին ներշնչում են, թե հայերը եկվորներ են, որը նշանակում է, թե նրանց տարածքային պահանջներն անմտություն են:

Միամտություն է կարծել, թե բնիկներին արտաքսելով կարելի է նրանց զրկել պատմական հիշողությունից: 1978 թ. Նախիջեւանում առաջին անգամ այցելելով «Ոսկե կիրճ» (հնում այդպես էին անվանում Ագուլիսը եւ իր երջակայքը), ես զգացի, որ գենետիկ հիշողությունս լարելով հին քաղաքի ավերակների միջից տեսնում եմ երկնասլաց գմբեթներով բոլոր 12 հայկական եկեղեցիների հոյակերտությունը, 8000 քարաշեն հայկական տները: Պատկերացնում էի, թե լեռնալանջին ինչպես է ծավալվել պտղատու ծառերի կանաչի մեջ թաղված դրախտային քաղաքը: Տեսնում էի 150-ից ավելի արհեստանոցներն իրենց հարյուրավոր արհեստավորներով, հարուստ խանութները, բազմաթիվ դպրոցները, առեւտրի ուսումնարանը, մշակույթի տունը, դեղատները, բաղնիքները, շուկաները, գրադարանները, հյուրանոցները:

Ամեն ինչ կործանեցին վանդալները: Իսկ վերջերս իմացա, որ Ագուլիսում մեռյալ ծառերի նման կանգուն են մնացել ընդամենը 5 եկեղեցի:

Եվ սա ընդամենը մեկ քաղաք է, հայկական մեկ բնակավայր, որի մոտ հսկայական տարածքի վրա փռված է քրիստոնեական հին գերեզմանատուն: Քարուքանդ են արված բոլոր գերեզմանները: Ամենուրեք մուրճերի ու բուլդոզերների հարվածներից խեղված տապանաքարեր են: Թուրքերն այդ ամենին դիմում են ապագա սերունդների վրեժխնդրության ահից: Սակայն բարբարոսն ու վանդալը չեն հասկանա, որ Նախիջեւանի երկրամասի բոլոր բնակավայրերը մարմնավորող ու խորհրդանշող Ագուլիսը հիշողություն է: Նա նախազգուշացնում է եւ հիշեցնում: Ագուլիսը հայրենիքի կոչն է ու կանչը: 20 տարի առաջ ես «Օջախ» գրքում գրել եմ, որ կգա ժամը, եւ Ագուլիսը կվերականգնվի, կվերածնվի, եթե Հայաստանի հողում նրանից նույնիսկ հետք էլ մնացած չլինի, քանզի ժողովրդի հիշողության մեջ երբեք չի անհետանում այն ամենը, ինչ կապված է ոչ թե հողի, տարածքի կամ քարի, այլ հայրենիքի հետ, որի ընդերքից լսվում է մեր նախնիների կանչը: Գլխավորը հավատալն է, որ կգա ժամը: Անդայման կգա: Գլխավորն այդ ժամը մոտեցնելն է գործով, պայքարով: Քչերն էին հավատում, թե կգա ժամը եւ կհանգստանան մեր նախնիների հոգիները Շուշիի եւ Քարվաճառի, Լաչինի ու Կուբաթլուի, Զանգելանի ու Ջաբրայիլի, Ֆիզուլու ու Աղդամի հին հայկական գերեզմանոցներում: Այսօր ոգու վերածնդի շոշափելի փաստարկներ են փյունիկ թռչունի պես վերակենդանացած ու վերակառուցված Գառնիի հայկական հեթանոսական տաճարը Հայաստանի Հանրապետությունում եւ Ղազանչեցոց եկեղեցին Շուշիում:

Ղարաբաղյան շարժումը մեր միջից կաթիլ առ կաթիլ հանելով ստրուկին, մեզ վերադարձրեց պատմական հիշատությունն ու արիությունը, բառացիորեն պարտավորեցնելով հիշել Նախիջեւանի մասին, առանց որի Հայաստանն ապագա չունի: Կարելի՞ է արդյոք մոռանալ, որ Նախիջեւանը հայկական քաղաքակրթության բնօրանն է, աշխարհում հայտնի բազմաթիվ հայկական գաղթօջախների, հատկապես Դոնի հայերի, նախահայրենիքը, տասնյակ հազարավոր անկրկնելի հայկական խաչքարերի երկրամասը, մեծն Լազարյանների, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Մանուկ Աբեղյանի, Ռոստոմի (Ստեփան Զորյան), Դավիթ Մալյանի, Սերգո Համբարձումյանի, առասպելական զորավարների, հայ ազգային ոգու կրողներ Դրոյի եւ Նժդեհի հայրենիքը, որոնց անունները ուրբերին դեռ վերջերս Արցախում մեր տղաները հայրենիքի ազատագրման մարտերի ճնշում:

Մեր նախնիներն ու սերունդները մեզ կներե՞ն արդյոք, եթե մոռանանք այդ անունները, եթե մանկուրտի խլությամբ չլսենք Նախիջեւանի հառաչները: Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ մեր վիճակն առանց Արգամ Այվազյանի անձնվիրության, որն իր անգին գրքերով ու հետազոտական աշխատություններով մեզ հիշեցնում է Նախիջեւանի ցավն ու տագնապը: Ղարաբաղյան շարժման արշալույսին մենք բարձրացնում էինք այն հարցը, որ մեր աչքի առջեւ Սադարակում Արաքսի վրա կամուրջ են գցում, որը ՆԱՏՕ-ական Թուրքիան կմիացնի Նախիջեւանի թուրքական հանրապետությանը եւ որ շուտով այդ կամրջով թուրքերն անպայման գենք կուղարկեն Ղարաբաղի ռազմաճակատ եւ Արարատի երջանի մարտադաշտ: Մենք չէինք սխալվում: Սակայն բառացիորեն պետական մակարդակով փակում էին բոլոր նրանց բերանը, ովքեր արտաբերում էին «Նախիջեւան» բառը: Դա անում էր առաջին հերթին նախկին նախագահը, մարդ, որը բազմաթիվ հանցագործություններից բացի, իմ համոզմամբ, կատարել է ամենաահավոր բանը՝ մեր ժողովրդին զրկել է Շուշիի եւ Լաչինի հաղթանակներից հետո դրանց բերկրանքն զգալու հնարավորությունից: Հենց 92 թ. թեժ ամռանն էր, որ նա հաղթանակած ժողովրդի հոգին թունոտ կերպով եւ սադիստաբար լցնում էր պարտվողական տրամադրություններով, որպեսզի համապատասխան տագնապալի մթնոլորտ ստեղծի երկրից դաշնակցական ղեկավարների արտաքսման համար: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում Նախիջեւանի մասին, այդ մարդն ամբոխավարական ձեւով ծամարտակում եւ իր սատրապների շուրթերով կրկնում էր, թե մենք «մեր» Նախիջեւանով իբր երրորդ աշխարհամարտի կոչն ենք անում:

Մինչդեռ երրորդ աշխարհամարտն ինչ-որ ժամանակ իրոք սկսվելու է բացառապես այն պատճառով, որ թուրք մարդասպանները, հույս դնելով քաղաքակիրթ ժողովուրդների ինչ-որ համընդհանուր կարճատեսության վրա, անպատիժ կերպով ավերելու են օտար երկրները: Քարտեզի վրա ցույց տվեք որեւէ թեժ կետ, որտեղ անմեղ մարդկանց արյուն է հոսում եւ որտեղ խառը չէ պանթուրքիստների մասը: Չե՞ք գտնի: Բացառությունները սոսկ հաստատում են կանոնը: Այնպես որ, հայերի եւ հույների, բուլղարների եւ սերբերի, քրդերի եւ իսկական վրացիների, Թուրքիայի մյուս զոհերի պատմական հիշողությունը, որոնց թվում այսօր, ինչպես եւ անցյալում, նաեւ Ռուսաստանն է, ընդհակառակը, կկանխի երրորդ աշխարհամարտը:

Նախիջեւանի եւ Արեւմտյան ու Արեւելյան Հայաստանի մյուս բոլոր պատմական մարզերի բուն գենետիկ հիշողությամբ անգամ մենք միայն կամրապնդենք տարածաշրջանի խաղաղությունը: Քանզի լավ գիտենք թուրքերի գայլային ախորժակը, որոնք դիակապտողների նման պահը որսալով անմիջապես վազում են հենց այնտեղ, որտեղ մարդկանց փորձանք է պատահել, որտեղ այս կամ այն երկիրը թուլացել է, ինչպես դա պատահեց վերջերս ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Մի՞թե պարզ չէ, թե ինչո՞ւ 1917 թ. հոկտեմբերից անմիջապես հետո, երբ Ռուսաստանն իրոք թուլացած էր, արդեն հոգեվարք ապրող Թուրքիան աճապարեց իր համար շահավետ ձեւով լուծելու Ղարաբաղի ու Նախիջեւանի մտացածին հարցը: Ինչո՞ւ նա անմիջապես սակարկություն սկսեց Իրանի հետ՝ Լենինից ստացած ռուսական ոսկու առյուծի բաժինը ծախսելով այն նպատակով, որ ընդհանուր սահման ունենա արհեստականորեն ստեղծված Նախիջեւանի ինքնավար կազմավորման հետ: Այդ ինչո՞ւ նախագահ Դեմիրելը Մեղրիի երջանն անվանեց «անիծյալ սեպ», որը «թուրքական Նախիջեւանը» (Դեմիրելի տերմինն է) անջատում է «թուրքական Ադրբեջանից» (էջեւիթի տերմինն է): Ինչո՞ւ պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ ՆԱՏՕ-ի ստեղծման նախօրեին ԱՄՆ նախագահ Թրումենը Թուրքիան անվանեց «ԱՄՆ-ի ծայրաքեւելյան սահման»: Ինչո՞ւ ԽՍՀՄ-ի տրոհումը անմիջապես հետո ոչ թե Իրանը, այլ Թուրքիան սկսեց ամերիկյան փողերով տնտեսական ու քաղաքական օգնություն ցուցաբերել Խորհրդային Միությունից անջատված մահմեդական միութենական հանրապետություններին: Այդ ինչո՞ւ է Բախվում ԱՄՆ դեսպանը բացահայտորեն եւ ցինիկորեն ի լուր աշխարհի հայտարարում, թե հայերի ցեղասպանությունն իրագործած եւ Կիպրոսի խնդիրն ստեղծած բարբարոսական Թուրքիան «պետք է եռանդուն դեր խաղա Ղարաբաղի հակամարտության կարգավորման մեջ»: Այս եւ մյուս կենսահույզ «ինչուներին» մենք պարտավոր ենք պատասխանել այժմ եւ ներգործուն կերպով, որպեսզի գալիք սերնդին, որը կունենա իր սուր խնդիրները, չթողնենք նաեւ մեր չլուծված խնդիրները: Անկախ հորջորջվող մեր հանրապետությունը համառորեն լռել եւ լռում է Նախիջեւանի (եւ ոչ միայն Նախիջեւանի) առնչությամբ, քանզի ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա համարող նախկին նախագահի չարագույժ ու սրկամիտ տրամաբանության համաձայն, հայերի փրկարար օղակը մանկուրտ լինելն է: Թերեւս հենց դա է ժողովրդի կողմից նրա տապալման գլխավոր պատճառը: Եվ այսօր մեր ժողովուրդը պահանջում է մեղավորին պատժել ոչ թե վրեժխնդրության եւ արյան ծարավի զգացումներից ելնելով, այլ այն նպատակով, որպեսզի չկրկնվի Հայ դատի գաղափարի պղծումը:

Ժամանակի հրամայականն այն է, որ մեր սերնդից է կախված գալիք սերնդի լինել-չլինելու հարցը: Ղարաբաղյան շարժումն իր ծարավը հագեցնում էր Սիամանթոյի գավաթից՝ «հուսո գավաթից», որի կարիքն այսօր այնքան զգում է տառապյալ Նախիջեւանը: Նախիջեւանի համար սարսափելի չէր Ստալինի ու Աթաթուրքի նենգության զոհը դառնալը: Դա կարելի է հաղթահարել: Շատ ավելի ահավոր կլինի, եթե հայրենիքը սեփական զավակների մոռացության զոհը դառնա:

ՅՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գերմանացիների երթը դեպի Արարատ լեռ

Մինչեւ հիմա գրեթե լուսաբանված չէ, թե ինչպես են մեր երկրամասում հայտնվել գերմանացիները եւ ինչպիսի դրական ազդեցություն են ունեցել տեղաբնակների տնտեսական ու կուլտուրական զարգացման վրա:

Գերմանացիների կազմակերպված վերաբնակեցումը շաս խաղաքներում սկսվել է Պետրոս Առաջինի օրոք 1702 թ., մանիֆեստի հիման վրա, երբ այստեղ էին եկել հազարավոր գիտնականներ, ուսուցիչներ, ճարտարապետներ, նկարիչներ, արհեստավորներ եւ այլ մասնագետներ առեւտրի լայն զարգացման կառակցությամբ՝ սլավոնական իշխանների հրավերով: 1725 թ. հիմնված Պետերբուրգի գիտությունների ակադեմիան մինչեւ 19-րդ դարի կեսերը կազմված էր գործնականում միայն գերմանացիներից:

Եկատերինա երկրորդի կառավարման օրոք կայսրության սահմանները ձգվել էին մինչեւ Սեւ եւ Ազովի ծովերի ափերը, Կովկասյան լեռնաշղթան: Գերմանացիների վերաբնակեցման եւ երկրամասի զաղութացման հիմքը դրել էին Եկատերինա թագուհու ստորագրած մանիֆեստները:

Գերմանացիների առաջին խմբերը՝ 25-30 հազար մարդ, ժամանել էին 1764-1767 թթ., 7-ամյա պատերազմից սնանկացած Գերմանիայից: Արդեն 100 տարի անց Ռուսաստանում հաշվվում էր 505 օտարերկրյա գաղութ՝ մեծ մասամբ բնակեցված գերմանացիներով: Նրանց թիվը 1908 թ. Ռուսական կայսրությանում 2 մլն 70 հազար էր:

Վերաբնակեցման նախաձեռնությունը 1816-1818 թթ. պատկանում է Վյուրտեմբերգում գտնվող միստիկական, խորհրդաթաքական «հիլիաստեր» կոչվող աղանդին, որի առաջնորդը «տեսել» է աշխարհի առաջիկա կործանման, բոլոր ժողովուրդների վախճանի եւ դրանից հետո «Հազարամյա Ռայխի» ծագման հայտնությունները, տեսիլները: Ըստ դրանց՝ փրկության վայրը գտնվել է Անդրկովկասում, Արարատ լեռան շրջակայքում, որտեղ եւ պետք է կառուցվեր այդ հազարամյա պետությունը:

Այն ժամանակ թագավորող Ալեքսանդր Առաջինի մայրը՝ Մարիա Ֆեոդորովնան, սերվել էր Վյուրտեմբերգի արքայական տնից: Այդ փաստն իր դերն էր խաղացել եւ ամբողջ աղանդի վերաբնակեցման թույլտվությունը արագ էր ստացվել:

Հետախուզողների առաջին 40 ընտանիքները ճանապարհ էին ընկել 1816 թ. սեպտեմբերին, փոքր նավերով Դանուբ գետով՝ անցնելով Վիեննա, Իզմայիլ եւ Օդեսա ու ձմեռել Գրուլիբենթալ գերմանական գաղութում: Արդեն 31 ընտանիքներ շարունակել են ճամփորդությունը եւ 1817 թ. սեպտեմբերին հասել Թիֆլիս, որից 35 կմ հեռու հիմնել են Մարիենֆելդ բնակավայրը:

Աղանդի մոտ 8000 անդամ 1818 թ. ամռանը հավաքվել են Ուլմայում, որտեղից 14 զորաշրջանով շարժվել Դանուբով ներքեւ, մինչեւ Իզմայիլ: 3000-ը այդ ճանապարհին զոհվել են, մնացածները հասել են Սեւ ծովի ափամերձ գերմանական բնակավայրերը, ուր եւ ձմեռում են: 500 ընտանիքներ շարունակում են ուղեւորությունը մինչեւ Թիֆլիս: Տեղի իշխանությունները (ռուսական) տեղեկացնում են վերջիններիս, որ առաջ շարժվել դեպի Արարատ լեռը վտանգավոր է, քանի որ դրա ստորոտի մերձակա շրջաններում ապրում են վայրենի, բնամաբար տրամադրված թուրքական ցեղեր, որոնք չեն վերահսկվում: Եվ վերաբնակիչները իրենց առաջին բնակավայրերն են հիմնում Թիֆլիսի շրջակայքում՝ Անենֆելդ (Շամքոր), Ելենենդորֆ (Խանլար) եւ Կատարինֆելդ (Բոլնիս): Բնակավայրերը միմյանցից 35-150 կմ հեռավորության վրա կապ էին պահում, անհրաժեշտության դեպքում օգնում իրար՝ պաշտպանվելու քրդերի, թուրքերի եւ պարսիկների պարբերական հարձակումներից: Մինչեւ 1826 թ. բնակավայրերը մի քանի անգամ ավերվել եւ վերականգնվել են: Գերմանացիները պաշտպանություն եւ օժանդակություն էին գտնում միայն հայերի ու վրացիների մոտ:

Քիչ անց Անդրկովկասում արդեն կազմավորվել էին գերմանական բնակավայրերի երկու խումբ. մեկը «Վաղ շվաբսկու» վերաբնակիչների արեւելյան խումբը՝ պատմական Ուտիքի (հետագայում՝ Ռուսաստանի Ելիզավետպոլի) նահանգի Գադրման գավառի տարածքում, որի մեջ մտնում էին Ելենենդորֆը, Անենֆելդը, Գեորգիսֆելդը, Գրյունֆելդը, Ալեքսանդրֆելդը, Թրացբենֆելդը, Այգենֆելդը (Ղազախ): Մյուսը՝ Արեւմտյան խումբը, Վրաստանի տարածքում, որի մեջ մտնում են Կատարինֆելդը, Մարիենֆելդը, Ալեքսանդրդորֆը (Ավտչալո), Էլիզաբետթալը, Ալեքսանդերհիլֆը (Շալկա), Թռաուբենբերգը եւ Նոյ Թիֆլիսը (ծուլվել է Թբիլիսին):

Ըստ տարբեր աղբյուրների, 1900 թ. Անդրկովկասում կային 12-20 հազար գերմանացիներ, որոնց 1/3-ը բնակվում էր Բաքվում ու Թիֆլիսում, իսկ մնացածները՝ վերոնշյալ գաղութներում: Առաջին աշխարհամարտի տարիներին նրանց թիվը երեք անգամ կրճատվեց: Նրանք հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ, խաղողագործությամբ ու անասնապահությամբ, իսկ գլխավոր գործը գինեգործությունն էր:

Գրեթե յուրաքանչյուր գաղութ ուներ իր տարական եւ եկեղեցական դպրոցը: Ելենենդորֆում գործում էր ռեալական դպրոցը, որը հետագայում դարձավ ինտերնացիոնալ միջնակարգ դպրոց՝ գերմանական, ռուսական, հայկական, ասորական եւ ադրբեջանական բաժիններով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ դպրոցի բազայի վրա կազմավորվեցին 4 ինքնուրույն դպրոցներ՝ ռուսական, հայկական, ասորական եւ ադրբեջանական (գերմանացիները 1941 թ. սեպտեմբերին աքսորվել էին): Քաղաքի կենտրոնում գերմանական մի հոյակապ եկեղեցի էր, որը նախկինում ծառայել է իբրեւ եկեղեցական դպրոց, ապա՝ վերոհիշյալ ինտերնացիոնալ դպրոցի սպորտդահլիճ (հենց այդ դպրոցն էլ ես ավարտել եմ 1943 թ.): Ներկայումս, երբ 1990 թվականից հետո այստեղից հեռացան թե՛ հայերը եւ թե՛ ասորիներն ու հույները, հայտնի չէ, թե ինչի է ծառայում այդ սքանչելի ճարտարապետական կոթողը:

Թիֆլիսում 1818 թվականից գործում էր գերմանական ռեալական գիմնազիա, որտեղ սովորում էին նաեւ վրացիներն ու հայերը: Սովորել ցանկացողների թիվը գերազանցում էր տեղերի քանակը, իսկ շրջանավարտները կարող էին իրենց կրթությունը շարունակել Գերմանիայի ցանկացած համալսարանում: Թիֆլիսում 1893 թ. կառուցվել էր գերմանական նոր եկեղեցին, որը քանդվեց երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին: Մինչեւ հիմա հին թիֆլիսեցիները «Կիրոչնայա» են կոչում այն փողոցը, որտեղ կանգնած է եղել եկեղեցին:

Անդրկովկասյան գերմանական վերաբնակիչներին փոքր թվով միացել էին այլազգիներ՝ շվեյցարացիներ, հոլանդացիներ, իտալացիներ, հույներ: Մասնավորապես, Շուշի քաղաքում կար բազելյան միսիոներների բնակավայր, որոնց թուրքերն ամբողջովին մորթոտել էին ջարդերի ժամանակ:

Թերեւս, դեպի Արարատ գերմանացիների արշավի պատմության մեջ ամենազարմանալին այն է, որ նրանց մի փոքր մասին, այնուամենայնիվ, հաջողվել էր ընդհուպ մոտենալ Արարատի փեշերին: Երեւանի նահանգի Կարս քաղաքից 5 կմ դեպի հարավ-արեւմուտք այսօր կան երկու փոքրիկ թուրքական գյուղեր՝ Գարաբերեն ու Փաշաբերեն, որոնց, սակայն, շրջակա բնակիչները մինչեւ հիմա էլ անվանում են «Ալմանեյու» եւ «Նեմիսեյու», որ նշանակում է «գերմանական գյուղ»: Այստեղ, 1891 թ. հիմնվել էր Ալեքսանդերհիլֆ գերմանական գաղութի դուստր բնակավայր: Այդ ոչ մեծ, գործնականում անհայտ գաղութը կոչվել էր Պետրովսկ՝ Կարսի նահանգապետ Պետր Տոմիչի անունով: Այստեղ 1911 թ. ապրում էին 12 ընտանիք՝ շուրջ 200 մարդ ընդհանուր թվով, որոնք զբաղվում էին հիմնականում անասնապահությամբ եւ կաթնամթերքների արտադրությամբ: Մինչեւ 1914 թ. գերմանացիները բնակվում էին նաեւ Վլադիկարս եւ Խսոնկա (Ալմանեյու) գյուղերում, որտեղ նրանք կառուցել էին կաթի գործարաններ: Դրանց հիմնական արտադրանքը պանիրն էր: Յուրաքանչյուր գյուղացիական ծուխ ուներ շվեյցարական տեսակի 50-ից մինչեւ 70 կաթնատու կովեր, որոնք խաչասերվում էին տեղական տեսակների հետ:

Միմյանցից 4-5 կմ հեռու այդ երեք գյուղերը կազմում էին ոչ մեծ գերմանական շրջան, որը տեղավորված էր մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը գոյություն ունեցող ռուս-թուրքական սահմանից 60 կմ հեռավորության վրա: Այդ սահմանը փոխվելու կապակցությամբ 1914 թ. նոյեմբերին այստեղի գերմանացիների մեծ մասը մեկնել էր Այգենֆելդ գաղութը: Ըստ Վ. Ֆյուրստեյնի վկայության, որը 1971 թ. այցելել էր այդ գյուղերը, գերմանացիների կառուցած բարեկարգ տնակներում ներկայումս ապրում են թուրքերը, ինչպես այսօր Գադրմանաց աշխարհի գերմանական գաղութներում՝ ադրբեջանցիները:

Նախկին ԽՍՀՄ գերմանական ազգաբնակչությունը 1941 թ. սեպտեմբերին 5 օրվա ընթացքում ամբողջովին աքսորվեց Հյուսիսային Ղազախստան եւ Սիբիր, որտեղ աքսորաբնակության հատուկ ռեժիմը գործել է մինչեւ 1955 թ. դեկտեմբերի 13-ը: Սակայն հարազատ վայրեր վերադառնալը հնարավոր դարձավ 1964 թ. օգոստոսի 29-ի դեկրետից հետո, երբ խորհրդային գերմանացիներից հանվել էր բռնություն գործադրելու մեղադրանքը:



Ելենենդորֆի ռատուշայի շենքը

ՄԵՐԳԵՑ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
«Գադրմանք» հայրենագիտական
ամսաթերթի գլխավոր
խմբագիր

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրանը սկսեց լայնածավալ զորավարժությունները Աֆղանստանի սահմանի մերձակայքում

ԹԵՀՐԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի զինված ուժերը ձեռնամուխ են եղել Աֆղանստանի հետ սահմանակից շրջաններում լայնամասշտաբ զորավարժությունների առաջին փուլին, ինչը կարող է երկու պետությունների սահմանում լարվածության հետագա աճ հարուցել:

Զրահատանկային եւ հետեւակային զորամասերը հրետանու կրակի պաշտպանության ներքո սկսել են առաջ շարժվել ենթադրվող հակառակորդի դիրքերի ուղղությամբ: Զորավարժություններին, որոնք կրում են «Զուլֆաքար-2» կոդային անվանումը, կմասնակցի 200 հազար իրանցի զինծառայող: Զորավարժությունների համար նախատեսված տարածքը կազմում է 50 հազար քառակուսի կիլոմետր:

Իրանի բանակի զորավարժությունների սկսվելու առնչությամբ զինվորական փորձագետները կանխատեսում են, որ մոտակա օրերին Քաբուլից 20-25 կիլոմետր դեպի հյուսիս դիրքեր գրաված Ահմադ Շահ Մասուդի զորքերը վճռական հարձակում կձեռնարկեն թալիբների դեմ: Աֆղանական սահմանում իրանական զորքերի կուտակումը «Թալիբան» շարժման ղեկավարությանն ստիպել է վերադասավորել իր ուժերը: Թալիբները Իրանին սահմանակից շրջաններ են փոխադրել 20 հազար զոհային:



ՌՈՅԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Շաղովալյանցը Լոնդոնում շարադրեց հակաճգնաժամային ծրագրի հիմնական դրույթները

ԼՈՆԴՈՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի ներկայիս ճգնաժամից դուրս գալու հանգուցային տարր է առուլու փոխարժեքի կայունացումը: Ընդսմին խոսքը վերաբերում է ոչ թե վարչական միջոցներով փոխարժեքի հաստատագրմանը, այլ նրա կայունացմանը Ռուսաստանի կենտրոնական բանկի մասնակցությամբ արժութային սակարանում արժույթի առաջարկի ավելացման հիման վրա: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին ՈԴ էկոնոմիկայի նախարար Անդրեյ Շաղովալյանցը հայտարարել է Լոնդոնում, որտեղ պլանային հանդիպում է անցկացրել «մեծ ությակի» երկրների ղեկավարների անձնական ներկայացուցիչների հետ: Լրագրողների հետ կայացած հանդիպման ընթացքում նա շարադրել է հակաճգնաժամային ծրագրի հիմնական դրույթները, որը մոտ օրերս կներկայացվի քննարկման: Ազգային արժույթի կայունացման հետ մեկտեղ կընդունվեն Ռուսաստանի սահմաններից կապիտալի արտահանումը կանխող միջոցներ: Անհրաժեշտ են նաեւ բանկային համակարգի վերահսկողության համալիր միջոցներ: Ծրագրի մի հատուկ բաժին նվիրված է տնտեսական ոլորտում կաշառատորության դեմ պայքարի հիմնախնդիրներին, ընդգծել է Շաղովալյանցը:

ՀԱՍՏՈՍ

«Գազպրոմը» եւ «Շելը» ստեղծելու են համատեղ նախագծերի ընկերություն

ՄՈՍԿՎԱ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Մոտ ժամանակներս «Գազպրոմը» եւ նրա ռազմավարական գործընկեր «Շել» անգլո-հոլանդական ընկերությունը մտադիր են ստեղծել համատեղ նախագծերի իրագործման ընկերություն: «Այն կանվանվի զարգացման ընկերություն», այսօր լրագրողներին հայտնեց «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության վարչության փոխնախագահ Պյոտր Ռոդիոնովը: Նրա խոսքերով, նոր կազմավորման, որտեղ ընկերությունները կունենան հավասար բաժիններ, հիմնական դերը կդառնան բոլոր համատեղ նախագծերի վերլուծությունը, նախապատրաստումն ու անմիջական գործնական իրականացումը:

Իտալիայի կառավարական պատվիրակությունը Ադրբեջանում

ՀՈՌՄ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իտալիայի կառավարական պատվիրակությունն այսօր երկօրյա ուղեւորության է մեկնել Ադրբեջան «կովկասյան տարածաշրջանում իրադրությանը ծանոթանալու»: Պատվիրակությունը գլխավորում է Իտալիայի փոխարտգործնախարար Պիերո Ֆասինոն, պատվիրակության կազմում են փորձագետներ եւ երկրի գործարար ու ֆինանսական շրջանների ներկայացուցիչներ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այցի ընթացքում նախատեսվում են հանդիպումներ Ադրբեջանի ղեկավարների հետ եւ երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների համագործակցության արձանագրության ստորագրում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«Նոր անուններ» ներկայացնում է...

«Նոր անուններ»... Այսպես է կոչվում բարեգործական այն ծրագիրը, որը պարբերաբար ունկնդրին է ներկայացնում պատանի շնորհալի երաժիշտ-կատարողների: Ամեն անգամ, երբ մեծ բեմում տեսնում ես փոքրիկ մենակատարներին ու լսում նրանց շնորհալի նվագը, հիանում ես, թե որքա՜ն վարժ են տիրապետում նրանք երաժշտական գործիքին եւ թե ինչքա՜ն երաժշտական հույզեր ու ապրումներ են ամփոփված այդ նորելուկ հոգիներում: Եվ համերգից համերգ, ելույթից ելույթ հղկվում ու կատարելագործվում է նրանց արվեստը, հաղթահարվում ավելորդ հուզմունքը, մշակվում բեմական պահելաձեւը, ձեւավորվում ապագա արտիստի ներդաշնակ կերպարը: Ասել է թե ծնվում է այն հրաշքը, որ սիրում է մեկտեղ բաբախել բազում ունկնդիրների սրտերը: Այդպես էր նաեւ վերջին «Երաժշտական գարուն» մանկապատանեկան փառատոնի եզրափակիչ-համերգի ժամանակ, երբ մեկը մյուսի ետեւից բեմ էին ելնում գեղեցկատես աղջիկներ ու պատանիներ եւ հնչեցնում դասական ու ժամանակակից հեղինակների տարբեր ստեղծագործություններ: Ովքե՞ր են նրանք այսօրվա տակավին նոր անունները, որոնք վաղն արդեն իրենց ուսերին պետք է կրեն մեր հանրապետության երաժշտակատարողական կյանքի ծանրությունը: Այս եւ ուրիշ հարցերի, կապված «Նոր անուններ» բարեգործական ծրագրի գործունեության հետ, խնդրեցինք պատասխանել ծրագրի ղեկավար, Հայ մշակույթի գործիչների ընկերակցության նախագահ, մշակույթի վաստակավոր գործիչ Սիլվա Մեհինյանին:

– Տիկին Մեհինյան, ինչո՞ւ ստեղծվեց «Նոր անուններ» ծրագիրը եւ ի՞նչ նպատակներ է հետապնդում:

– Աշխատանքիս բերումով մշտապես ուզվել եմ մեր հանրապետության մշակույթի լավագույն գործիչների հետ: Վերջին տարիների դժվարություններով լի մեր կյանքը, ավաղ, սիրելիս նրանցից շատերին հեռանալ հայրենիքից: Մեր առաջա մշակութային կյանքի լինել-չլինելու մտահոգությունն էր, որ առիթ տվեց մտածել այսօրվա մեր մատաղ սերնդի հետ տարվող աշխատանքի մասին: Ծնվեց մի ծրագիր, որի հիմնական նպատակներն են շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներին ի հայտ բերելն ու նրանց հովանավորելը: Գաղտնիք չէ, որ արտիստը ծնվում է բեմում: Եվ այսօրվա փոքրիկ մենակատարին պետք է հնարավորություն տալ հանդես գալու մեծ բեմերից, խրախուսել եւ նյութապես աջակցել նրան: Դրա համար պետք է կազմակերպել փառատոներ, մրցույթներ, ցուցադրական ելույթներ, վարպետության կատարելագործման դասընթացներ...

– Ինչպե՞ս եք ընտրում պատանի երաժիշտներին:

– Ամեն տարի գարնանը մենք հրավիրում ենք հեղինակավոր մասնագետ-երաժիշտների խորհուրդ եւ կազմակերպում ունկնդրում-մրցույթներ: Դրանց մասնակցում են մայրաքաղաքի, ինչպես նաեւ հանրապետության երաժշտական կրթօջախների լավագույն սաները, որոնցից լավագույններն անդամագրվում են մեր ծրագրին: Ներկայումս «Նոր անունները» միավորում է 10-16 տարեկան շուրջ հիսուն պատանի երաժիշտների, որոնց թվում կան միջազգային, հանրապետական մրցույթների եւ փառատոների դափնեկիրներ:

– Ինչպիսի՞ն է պատանի երաժիշտների համերգային կենսագրությունը:

– «Նոր անուններ» բարեգործական ծրագրի անդամները բազմաթիվ համերգներ են ունեցել մայրաքաղաքի տարբեր համերգասրահներում, երաժշտական դպրոցներում, հանրապետության մի շարք քաղաքներում՝ Գյումրի, Վանաձոր, Ալտարակ եւ այլն: Ի դեպ, երեւանում կազմակերպել ենք Շիրակի եւ Լոռու մարզերի պատանի երաժիշտների համերգները: Մեր համերգային կենսագրությունից կուզենայի առանձնացնել հայ մշակույթի նշանավոր գործիչներին, ինչպես նաեւ Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի մշակութային օրերին նվիրված համերգները, «Երաժշտական գարուն» փառատոնը...

– «Նոր անունները» ճանաչված են նաեւ աշխարհի շատ երկրներում: Հիրավի, հայ պատանի երաժիշտների ելույթների աշխարհագրական ընդգրկումներն արդեն հասնում են մինչեւ Լատինական Ամերիկա, Եվրոպա, Մերձավոր Արեւելք: Ներկայացրեք, խնդրեմ, ձեր հյուրախաղերը:

– Համերգային ուղեւորություններից յուրաքանչյուրն արդեն առանձին խոսակցության նյութ է: Ամեն ինչ սկսվեց դեռեւս 1993 թ., երբ «Նոր անուններ» ծրագրի սաները Սիրիահայ տիկնանց միության հրավերով մեկնեցին Սիրիա եւ Լիբանան: Այս տարի մենք կրկին եղանք այդ երկրներում՝ ներկայացնելով ծրագրի նոր սերնդի շնորհալիներին:

Տպավորիչ էին մեր երեխաների ելույթները 1997 թ. Ֆրանսիայի մի շարք քաղաքներում, որտեղ համերգներն անցնում էին լեփլեցուն դահլիճներում, հոտնկայս ծափահարություններով: Ֆրանսիական մամուլը բարձր գնահատական տվեց հայ պատանիների կատարողական արվեստին:

Հիշարժան էին նաեւ մեր մոսկովյան հյուրախաղերը: 1997 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության դեսպանատան (նախկինում՝ Լազարյան ճեմարանի) կամարաշուք դահլիճում կայացած համերգը հարգանքի տուրք էր ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակին: Ունկնդիրների վկայությամբ՝ այն ուրույն խորհուրդ էր պարունակում՝ ժողովրդի ոգու հարատեւության ու նոր վերածննդի խորհուրդը, որ լսելի ու շոշափելի էր այդ երեկո առավել, քան երբեւէ:

Այս տարվա մայիսին Շվեյցարիայի երաժշտական ընկերության հրավերով հայ պատանի երաժիշտները մի շարք համերգներ տվեցին Ցյուրիխի եւ Բեռնի կոնսերվատորիաներում, Բազելի երաժշտարակության խնդիրներին XXI դարի նախաշեմին: Միասնական մշակութային դաշտի ստեղծումը ԱՊՀ երկրների միջեւ կօգնի առավել լիարժեք կերպով իրագործելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Երաժշտությունը եւ աշխարհը» ծրագիրը, որի մի մասն ուղղակիորեն կապվում է «Նոր անուններ» միջազգային հիմնադրամի գործունեության հետ: Հուսով եմ, որ ապագայում մեր համագործակցությունը կունենա իր նոր արդյունքները:

– Հայ երաժշտական մշակույթի անցյալում միշտ չեն այն բարեբարները, ովքեր ձեռք են մեկնել սկսնակ երաժիշտներին: Անշուշտ, դուք եւս ունեք աջակիցներ:

– «Նոր անունները» ծնունդ առավ երկու կազմակերպությունների՝ Հայ մշակույթի գործիչների ընկերակցության եւ «Գեւորգ Ա. Մոմջյան» հիմնադրամի (տնօրեն՝ Ռ. Կոզմոյան) ջանքերով: Հիմնադրամի լայն կապերը դասական ակադեմիայում, այլ քաղաքներում: Հաջողությունն աննախադեպ էր, մամուլի արձագանքը՝ «հրաշամանուկներ»:

Այս ամենից զատ, «Նոր անուններ» ծրագրի սաները համերգային ընդարձակ ծրագրով հանդես են եկել Հայկազյան համալսարանի բացմանը Բեյրութում, Հայկական ցեղասպանությանը նվիրված երեկոյին Լոնդոնում, Մոսկվայի «Նոր անուններ» միջազգային բարեգործական հիմնադրամի գրասենյակում:

– Ինչպիսի՞ առնչություններ ունի ձեր ղեկավարած ծրագիրը մոսկովյան «Նոր անունների» հետ:

– Մեր համագործակցությունը այդ հեղինակավոր կազմակերպության հետ տարիների պատմություն ունի, ինչը պայմանավորված է, բնականաբար, խնդիրների ու նպատակների ընդհանրությամբ: Վերջերս մեր ծրագրի անդամները հաջողությամբ մասնակցեցին ԱՊՀ երկրների «Մոլորակի նոր անուններ» միջազգային մանկական փառատոնին, որը կազմակերպել էր Մոսկվայի «Նոր անուններ» միջազգային հիմնադրամը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Երաժշտական այս ներկայացուցչական հավաքում հայ պատանիների ելույթը բարձր գնահատվեց խստապահանջ մասնագետների կողմից: Փառատոնի շրջանակներում անցկացված կլոր սեղանը, որին մասնակցում էին Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Կորեայի, Մակեդոնիայի եւ ԱՊՀ տասը երկրների ներկայացուցիչներ, նվիրված էր աճող սերնդի գեղագիտական սփյուռքում մեծապես օգնում են մեր գործունեությանը, հատկապես միջոցների հայթայթմանը, արտասահմանում հյուրախաղերի կազմակերպմանը: Գործի մասնագիտական մարզը մշակութային գործիչների հոգածության տակ է:

Բացի այս, ծրագիրը հավանության է արժանացել այնպիսի հեղինակավոր անձանց ու կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, ՀՀ արտաքին գործերի եւ մշակույթի նախարարությունները, Իրինա Արխիպովայի հիմնադրամը, Ֆրանսահայ մշակութային միությունը, Սիրիահայ տիկնանց միությունը եւ այլն: Սիրով կընդունենք բոլոր նրանց, ովքեր կցանկանան միանալ մեր ծրագրին:

– Ինչպիսի՞ն է լինելու մեր մշակութային կյանքի վաղվա օրը:

– Ես բազմիցս կրկնել եմ, որ այսօրվա մշակութային կյանքի կարեւոր խնդիրներից մեկն այն է, որ Հայաստանը չդատարկվի տաղանդավոր մարդկանցից: Այսօր մենք ունենք պատանի տաղանդների հիանալի սերունդ: Ունենք մասնագետ-ուսուցիչների հրաշալի բանակ, որն արժանի է թե՛ գնահատանքի եւ թե՛ խրախուսանքի: Արդ, հարկավոր է ամեն ինչ անել զորացնելու մեր շնորհաշատ երեխաներին, ազգովին տեր կանգնելու նրանց ու պահպանելու այդ «ոսկե հիմնադրամը» հանուն մշակութային ապագայի:

Հարցազրույցը վարեց
երաժշտագետ
Ն. ՈՍԿԵՌՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ

Հանդիպում սփյուռքահայ բանաստեղծ Հակոբ Սարգիսյանի հետ

Հայաստանի գրողների միության հյուրն էր օվեյցարաբնակ բանաստեղծ Հակոբ Սարգիսյանը: Միության աշխատողների եւ գրասեր հասարակայնության հետ նրա հանդիպման առիթը «Մկրատի շեղբին վրա» բանաստեղծությունների ժողովածուն էր, որը լույս է տեսել Հայաստանում:

Սփյուռքահայ մտավորականին ճակատագրի բերումով բաժին ընկած հազար ու մի ազգասիրական-հայրենասիրական խնդիրներից դուրս Հ. Սարգիսյանը գրում է նաեւ բանաստեղծություններ: Թեեւ տարիքն առած այր է արդեն, բայց խնդրո առարկա ժողովածուն նրա առաջնեկն է:

ՀԳ միության առաջին քարտուղար Աբգար Ափինյանը ցանկալի հյուրին ողջունելուց զատ խոսեց նաեւ միության ծրագրերի, «Նոր դար» եռամսյա հանդեսի մասին: Նա շեշտեց այն միտքը, որ սփյուռքահայ մտավորականները հաճախ պետք է այցելեն Հայաստան, առավել ամուր լինի հայրենիք-սփյուռք կապը, որպեսզի ի թիվս ազգային այլ հարցերի բարձրանա գրական երկերի մակարդակը եւ համեմատվի արտասահմանյան զարգացած գրականության հետ:

Հ. Սարգիսյանի ստեղծագործությունների մասին դրվատանքի ելույթներով հանդես եկան Շահե արք. Աճեմյանը, բանաստեղծներ Արտաշես Ղազարյանը, Ռոմիկ Սարդարյանը, Արմեն Մարտիրոսյանը, Մեսրոպեն, քուրդ գրող Կարլենե Չաչանեն, «Նոր դար» հանդեսի տնօրեն Վահե Ստեփանյանը, արձակագիր Ռաֆայել Նահապետյանը, թարգմանիչ Հրաչյա Բելլերյանը:

Բանախոսները ժողովածուն համարեցին թեմատիկ, որում գերիշխողը հային փնտրելու, պահպանելու, զորավիգ լինելու եւ արժանապատվորեն ապրելու ձգտումն է:

«Մեր առաջնահերթ խնդիրը, ասաց Հ. Սարգիսյանը, հայրենիքի պաշտպանությունն է, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության եւ տնտեսության վերականգնումն է: Այդ ամենի համար մենք պետք է իրար լավ ճանաչենք եւ գործենք համատեղ»:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ



ԳՈՐԻՍ

Առաջավոր փորձի հասցե՝ Ակսել Բակունցի անվան դպրոց-վարժարան

Արդեն 2-րդ օրաշավարտներին կյանք ճամփեց լուսավորության նախարարության նախաձեռնությամբ վարժարանային սիստեմի անցած Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը (տնօրեն Ռիտա Սելիկյան): Ոչ միայն քաղաքում ու մարզում, այլեւ հանրապետությունում բարի անուն ունեցող կրթական այս հաստատության բնագիտական, տնտեսագիտության ու հումանիտար հոսքերի օրաշավարտների մոտ 85 տոկոսը քննական բարձր բալերով ուսանողի կոչում նվաճեց հանրապետության առաջնակարգ բուհերում: Մեկ օրինակ. միայն բնագիտական հոսքից այս տարի 5, անցած տարի 6 աշակերտ դարձան երեւանի բժշկական համալսարանի ուսանողներ (հիմնականում անվճար ուսուցմամբ):

Վարժարանի նպատակաուղղված ու խորացված ուսուցման գործը իրականացնում է մանկավարժների մի հաշտ կոլեկտիվ. Գրիգոր Մանուչարյան, Կամո Սովսիսյան (ֆիզիկա), Վալերիկ Նարինյան (մաթեմատիկա), Լարիսա Զավահիրյան (կենսաբանություն), Մասվեյ Ղազարյան (քիմիա), Ռիտա Սելիկյան եւ Սիլվա Սնտոնյան (հայոց լեզու եւ գրականություն) եւ ուրիշներ:

Բարձր արդյունքներ են արձանագրվում նաեւ դպրոցական օլիմպիադաների ժամանակ. այս տարի դպրոցը մարզում ճանաչվեց 2-րդը, իսկ երեք աշակերտներ՝ Անա Վանեսյանը (կենսաբանություն), Սաթենիկ Հայրապետյանը (ֆրանսերեն) եւ Կարեն Միքայելյանը (մաթեմատիկա) պատվով վերադարձան օլիմպիադայի նաեւ հանրապետական փուլից:

Իմիջիայլոց, անընկալելի է մնում ծիծաղ թե զայրույթ հարուցող մի փաստ. բարոյակա՞ն է արդյոք ստեղծագործող ուսուցչին ողորմահուլչ 50 կամ 75 դրամով «արժեւորելը»: Կամ գուցե մեծ այրերը սրա մեջ հասարակ մահկանացուներիս անընկալելի իմա՞ստ են տեսնում...

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

Շնորհավորանք ուսուցչին

Սիրելի ուսուցչուհի ընկ. Ն. Զաքարյան

Հանձին Ձեզ շնորհավորում ենք մեր բոլոր ուսուցիչներին տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ: Ցանկանում ենք առողջություն, համբերություն եւ հաջողություն սերունդ կրթելու ու դաստիարակելու տմնաջան եւ շնորհակալ գործում:

Երեւանի թիվ 51 դպրոցի 1ե դասարանի կողմից
ԱՐԹՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Ընդմիջումից առաջ

Հանրապետական առաջնության բարձրագույն խմբի 1-6-րդ տեղերի համար պայքարող թիմերն սկսեցին վերջին՝ չորրորդ շրջանը: Հանդիպեցին այն նույն զույգերը, ինչ-որ 5 օր առաջ:

Առաջատարը «Ցեմենտը», Արարատի քաղաքային մարզադաշտում ընդունել էր «Երեբունի-ՀՄՄ»-ին: Արդեն առաջին խաղակեսում դաշտի տերերը վճռեցին հանդիպման ելքը. նրանք առջեւում էին 4-1 հաշվով: «Ցեմենտը» երկրորդ խաղակեսում ամրագնդեց իր հաղթանակը՝ եւս մեկ գոլ խփելով մրցակցի դարպասը. 5-1, եւ թիմը կրկին ընթանում է առաջին տեղում: Այս խաղում հեթ-տրիկի հեղինակ դարձավ Արմեն Սարգսյանը, մեկական անգամ մրցակցի դարպասը գրավեցին Շիրակ Սառիկյանը եւ Նորայր Հոխոյանը: Երեւանցիներից պատասխան գոլը խփեց Արսեն Հովսեփյանը:

Նույնպես երեք անգամ գրավեց հակառակորդ թիմի դարպասը Տիգրան Եսայանը: Աբովյան քաղաքում անցկացված «Փյունիկ»-«Երեւան» խաղում վերջինիս հարձակվողն արագությամբ, որ իրոք լավ մարզավիճակում է գտնվում: Ընդ որում, Եսայանը կարող էր 4-րդ գոլը խփել «Փյունիկին», երբ վերջինիս դարպասին նշանակված 11 մետրանոց տուգանային հարվածը կատարել նրան վստահվեց: Ավա՜ղ... ոմբարկուն այս անգամ վրիպեց: Եվս մեկական գոլ խփեցին Վարդան Մինասյանն ու Սուրեն Չախալյանը, եւ «Երեւանը» կրկին խոշոր 5-0 հաշվով հաղթեց «Փյունիկին»:

Հինգ օր առաջ, երրորդ շրջանի վերջին խաղում «Շիրակը» Երեւանում 1-3 հաշվով պարտություն էր կրել «Արարատից» ու մրցաշարային աղյուսակում նահանջել երկրորդ տեղ: Այս անգամ գյումրեցիները հաղթեցին իրենց նեղացնողներին, եւ նույնպես 3-1 հաշվով: Առաջին խաղակեսում ընդամենը մեկ անգամ գնդակը հայտնվեց ցանցում: Հաջողության հասավ «Շիրակի» ավագ Սամվել Նիկոլյանը: Հանգուցալուծումը եղավ երկրորդ խաղակեսի վերջին, երբ գյումրեցիների հարձակվող Կոլյա Եփրանոսյանը երեք րոպեի ընթացքում (76-րդ եւ 79-րդ) երկու անգամ գրավեց արարատցիների դարպասը: Միայն դրանից հետո երեւանցի Արամ Ոսկանյանին հաջողվեց «հեղինակության գոլ» խփել դաշտի տերերի դարպասը 3-1:

Մինչեւ հոկտեմբերի 21-ը ընդմիջում է հայտարարվել հանրապետական առաջնությունում, քանի որ երկրի ազգային եւ երիտասարդական հավաքականները հանդես են գալու Եվրոպայի առաջնության ընտրական խաղերում:

Մրցաշարային աղյուսակ
Բարձրագույն խումբ
1-6-րդ տեղեր
Հոկտեմբերի 2-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ցեմենտ	22	17	4	1	62-17	55
2. Շիրակ	22	16	4	2	58-19	52
3. Երեւան	22	13	3	6	44-22	42
4. Երեբունի	22	9	4	9	33-34	31
5. Արարատ	22	7	5	10	28-36	26
6. Փյունիկ	22	5	3	14	23-54	18

Առաջնության ռմբարկուները

Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ «Շիրակ»	12
Արա ՀԱԿՈԲՅԱՆ «Դվին»	12
Տիգրան ԵՍԱՅԱՆ «Երեւան»	11
Շիրակ ՍԱՌԻԿՅԱՆ «Ցեմենտ»	11
Տիգրան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ «Ցեմենտ»	10
Արամ ՈՍԿԱՆՅԱՆ «Արարատ»	10

Երկրորդ տուրի հանդիպումները

Եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի մրցաշարերում անցկացվեցին երկրորդ տուրի խաղերը:

Առաջին խմբում աղյուսակը գլխավորում են ֆավորիտը՝ «Այաքսը» եւ «Օլիմպիակոսը»: Հոլանդացիները դժվարությամբ առա[illegible] մամբ, իսկ հույները կրկին ցույց տվեցին, որ սեփական խաղադաշտում իրենք շատ վտանգավոր են:

Մինչեւ մրցաշարի սկսվելը երկրորդ խմբում շատ բարձր էին գնահատվում «Յուվենտուսի» հնարավորությունները: Սակայն Թուրինի թիմում ինչ-որ բան կարգին չէ: Այս անգամ էլ իտալացիները ոչ-ոքի խաղացին, ընդ որում, նրանք մի կերպ խուսափեցին պարտությունից: Առաջին գնդակը հայտնվեց Տրոնհեյմի «Ռոսենբորգի» դարպասում, Ֆիլիպո Ինզագիի հարվածից հետո: Պաշտպանությունում «Յուվենտուսի» խաղացողները սխալներ էին թույլ տալիս, հաճախ էլ խախտում էին կանոնները: Բելգիացի մրցավարը 2 անգամ 11 մետրանոց տուգանային հարված նշանակեց թուրինցիների դարպասին, սակայն «Ռոսենբորգի» ֆուտբոլիստները դրանցից միայն մեկը կարողացան իրացնել:

Երբ մի քանի օր առաջ Ռուսաստանի առաջնության վերջին տուրում բացահայտ առաջատար «Սպարտակը» 1-4 հաշվով պարտություն կրեց ԲԿՄԱ-ից, թվաց, թե Օլեգ Ռոմանցեւի սաները վաղ վիճակում կհայտնվեն հանրահայտ «Ռեալի» հետ խաղում: Սակայն երրորդ խմբի փաստորեն կարեւորագույն խաղերից մեկն այլ կերպ ավարտվեց: «Լուժնիկիում» հավաքված համարյա 65 հազար հանդիսականները ականատես եղան բավականին դիտարժան խաղի: Հիմնական իրադարձությունները ծավալվեցին հանդիպման երկրորդ կեսում: Խաղի 64-րդ րոպեին «Ռեալի» կիսապաշտպան Կլաուդիո Չեդորֆի հուժկու հարվածից հետո գնդակը հորիզոնական ծողափայտից հետ եկավ, իսկ Ռաուլը գլխի հարվածով բացեց հաշիվը: 12 րոպե անց սպարտակցիները խփեցին պատասխան գոլը. Նրանց ավագ Իլյա Ցիմբալարը վարպետորեն իրացրեց տուգանային հարվածը, եւ «Ռեալի» դարպասապահ Բոդո Իլգները չկարողացավ օգնել իր թիմին: 82-րդ րոպեին հաշիվը դարձավ 2-1. իր խաղընկերների՝ Անդրեյ Տիխոնովի եւ բրազիլացի Ռոբսոնի փոխանցումները դիպուկ հարվածով եզրափակեց եգոր Տիտովը:

Այս խմբի երկրորդ հանդիպումը, Միլանի «Ինտեր» եւ Գրացի «Շտուրմ» թիմերի միջեւ, անցավ իտալացիների մեծ առավելությամբ: Սակայն զգացվում էր վնասվածք ստացած Ռոնալդոյի եւ Ռոբերտո Բաջոյի բացակայությունը: Միակ գոլը խփվեց մրցավարի ավելացրած լրացուցիչ 4-րդ րոպեին, երբ Յուրի Ջորկաեֆը մոտ տարածությունից վերջապես գնդակն ուղարկեց ավստրիացիների դարպասը:

Չորրորդ խմբում առաջատար դարձավ «Բարսելոնը»: Կատալոնցիների թիմին հաղթանակ բերեց բրազիլացի Անդերսոնը, որը երկու անգամ գրավեց «Բրոնդբյուի» դարպասը: Մեկ այլ բրազիլացի՝ «Բավարիայի» հարձակվող Ջովանին էլբերը, երկու գոլ խփեց «Մանչեսթեր Յունայթեդի» դարպասը: Ընդ որում, երկրորդը խաղի վերջին վայրկյաններին էր եւ ոչ-ոքի պարգեւեց գերմանացիներին: Իսկ անգլիացիներից գոլերը խփել էին Դուայթ Յորքը եւ Պոլ Սքոուլզը:



Իր երկրպագուներին հուսախաբ արեց Կիեւի «Դինամոն», որն այժմ եզրափակում է հինգերորդ խմբի մրցաշարային աղյուսակը: Ուկրաինացի Շեւչենկոն խաղի 61-րդ րոպեին գլխի գեղեցիկ հարվածով գրավեց ֆրանսիական «Լանսի» դարպասը: Սակայն մրցակիցների հենց հաջորդ գրոհը հաջողություն բերեց նրանց: Հաշիվը հավասարեցրեց Տոնի Վիրելը: Այս խմբի մյուս խաղում Լոնդոնում տեղի «Արսենալը» առավելության հասավ «Պանաթինաիկոսի» նկատմամբ:

Վեցերորդ խմբում Գերմանիայի չեմպիոն «Կայզերսլաուտերնը» Հելսինկիում չկարողացավ հաղթահարել ՀԻԿ-ի դիմադրությունը, սակայն գլխավորում է աղյուսակը: Լիսաբոնում «Բենֆիկան» հավասար խաղում կարողացավ մեկ գնդակ ավելի խփել «Յուվենտուսից»:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Այաքս (Հոլանդիա)-Պորտու (Պորտուգալիա)՝ 2-1, Օլիմպիակոս (Հունաստան)-Կրոացիա (Խորվաթիա)՝ 2-0:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Օլիմպիակոս	2	1	1	0	4-2	4
2. Այաքս	2	1	1	0	2-1	4
3. Պորտու	2	0	1	1	3-4	1
4. Կրոացիա	2	0	1	1	0-2	1

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ռոսենբորգ (Նորվեգիա)-Յուվենտուս (Իտալիա)՝ 1-1, Գալաթասարայ (Թուրքիա)-Ասլեթիկ (Իսպանիա)՝ 2-1:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գալաթասարայ	2	1	1	0	4-3	4
2. Յուվենտուս	2	0	2	0	3-3	2
3. Ռոսենբորգ	2	0	2	0	2-2	2
4. Ասլեթիկ	2	0	1	1	2-3	1

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Սպարտակ (Ռուսաստան)-Ռեալ (Իսպանիա)՝ 2-1, Ինտեր (Իտալիա)-Շտուրմ (Ավստրիա)՝ 1-0:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սպարտակ	2	2	0	0	4-1	6
2. Ռեալ	2	1	0	1	3-2	3
3. Ինտեր	2	1	0	1	1-2	3
4. Շտուրմ	2	0	0	2	0-3	0

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բավարիա (Գերմանիա)-Մանչեսթեր Յունայթեդ (Անգլիա)՝ 2-2, Բարսելոն (Իսպանիա)-Բրոնդբյու (Դանիա)՝ 2-0:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բարսելոն	2	1	1	0	5-3	4
2. Բրոնդբյու	2	1	0	1	2-3	3
3. Մանչեսթր Յուն.	2	0	2	0	5-5	2
4. Բավարիա	2	0	1	1	3-4	1

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Դինամո (Ուկրաինա)-Լանս (Ֆրանսիա)՝ 1-1, Արսենալ (Անգլիա)-Պանաթինաիկոս (Հունաստան)՝ 2-1:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արսենալ	2	1	1	0	3-2	4
2. Պանաթին.	2	1	0	1	3-3	2
3. Լանս	2	0	2	0	2-2	2
4. Դինամո	2	0	1	1	2-3	1

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բենֆիկա (Պորտուգալիա)-Էյնդհովեն (Հոլանդիա)՝ 2-1, ՀԻԿ (Ֆինլանդիա)-Կայզերսլաուտերն (Գերմանիա)՝ 0-0:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Կայզերսլ.	2	1	1	0	1-0	4
2. Էյնդհովեն	2	1	0	1	3-3	3
3. Բենֆիկա	2	1	0	1	2-2	3
4. ՀԻԿ	2	0	1	1	1-2	1

ՇԱԽՄԱՏ

Մեր գրոսմայստերները մտնում են հունի մեջ

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Էլիստայից

Հայաստանի տղամարդկանց հավաքականը գերազանց անցկացրեց շախմատի համաշխարհային օլիմպիադայի երկրորդ տուրը՝ 3-1 հաշվով վստահորեն հաղթելով Լատվիայի ուժեղ թիմին:

Մրցախաղը հանդարտ սկսվեց. Հակոբյանը, որը սեւերով հանդիպում էր Ռաուզիսի հետ, սկզբնախաղից հետո համոզվելով, որ առավելության հասնելու նախադայմաններ չկան, հաշտություն կնքեց: Լդուցյանը նավակի համարձակ զոհաբերությամբ ամբողջ խաղատախտակով սուր գրոհ ծավալեց եւ տպավորիչ հաղթանակ տարավ Կրակոպսի նկատմամբ: Վահանյանը, սեւերով խաղալով հայտնի գրոսմայստեր Կենգիսի հետ, ուժի դիրքերից մրցակցին ոչ-ոքի պարտադրեց: Գերազանց անցկացրեց իր անդրանիկ ելույթը մեր ազգային հավաքականի կազմում Աստյանը, որը փրկության հույսեր չթողեց Կրիվոնոսովին:

Հայ գրոսմայստերների հիմնական մրցակիցները տարբեր հաջողությամբ ավարտեցին իրենց հանդիպումները: Ասենք, որ ԱՄՆ-ը եւ Ռուսաստան-1-ը նույն՝ 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին համապատասխանաբար Կիրգիզիային եւ Չիլիին: Իսկական սենսացիա մատուցեց Բանգլադեշի հավաքականը՝ 2,5-1,5 հաշվով առավելության հասնելով ուժեղագույն թիմերից մեկի՝ Հոլանդիայի նկատմամբ: Հիշեցնենք, որ Բանգլադեշի շախմատիստները նախորդ օրը միայն նվազագույն հաշվով էին զիջել անգլիացիներին:

Ներկայացնում ենք տղամարդկանց մրցումների 10 առաջատար թիմերի դասավորությունը: Նկատենք, որ 6,5-ական միավոր ունեն եւս 5 հավաքականներ՝ Վրաստանը, Ուզբեկստանը, Ֆրանսիան, Ղազախստանը, Շվեյցարիան:

Երկու տուրից հետո

1. ԱՄՆ	7,5
2. Արգենտինա	7,5
3. Ռուսաստան-1	7
4. Ռումինիա	7
5. Հարավսլավիա	7
6. Շվեդիա	7
7. Մոլդովա	7
8. Հայաստան	6,5
9. Գերմանիա	6,5
10. Լիտվա	6,5

Երրորդ տուրում Հայաստանի հավաքականը կհանդիպի Մոլդովայի հետ:

Կանանց մրցումներում մեր շախմատիստուհիները 1,5-1,5 խաղացին Իսպանիայի հետ (Մկրտչյանը հաղթեց, Հլղաթյանը կիսեց միավորը, իսկ Դանիելյանը պարտվեց):

Այժմ Հայաստանի թիմն ունի 4,5 միավոր՝ նույնքան, ինչքան Վրաստանի եւ Չինաստանի ուժեղագույն հավաքականները եւ բաժանում է 9-17-րդ տեղերը: Առջեւում 6 միավորով Հարավսլավիան է:

Մեր կանանց հավաքականի հերթական մրցակիցը Ուզբեկստանն է:

ՎՈԼԵՅԲՈԼ

Քննարկվեցին մարզաձեւի հարցերը

ՀՀ սպորտվարչությունում տեղի ունեցավ վոլեյբոլի հանրապետական ֆեդերացիայի նիստ, որտեղ բավականին թվով հարցեր քննարկվեցին:

Մայրաքաղաքի ֆեդերացիայի կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ նախագահ Խաչիկ Ասմարյանը: Այլ հարցերի թվում նա խոսեց մարզաձեւի մասսայականացման բացակայության մասին: Պրն Ասմարյանը նշեց, որ Երեւանի ընդամենը 7 մարզադպրոցներում են վոլեյբոլ պարապում: 31 մարզիչներ պարապմունքներ են անցկացնում 60 խմբերում, մարզաձեւով զբաղվող տղաների ու աղջիկների ընդհանուր թիվը հազիվ է անցնում 800-ից: Քաղաքային ֆեդերացիայի նախագահը նշեց, որ տարիների առաջ հանրապետությունում վոլեյբոլ խաղացողների թիվը 55-57 հազար էր: Նահանջը, ինչ խոսք, զգալի է: Զեկուցողը տխուր վիճակի պատճառներից մեկը համարեց այն, որ նշված մարզադպրոցները պատկանում են թաղապետարաններին, որոնց միջոցները սահմանափակ են: Բավական է ասել, որ վերջին 4-5 տարվա ընթացքում մարզադպրոցները նոր գույք, հանդերձանք չեն ստացել:

Ավանի համայնքի համալիր մարզադպրոցի տնօրեն Զավեն Օհանյանը նշեց, որ իրոք մասսայականություն չկա: Նա ավելացրեց, որ հանրակրթական դպրոցների դահլիճներում պարապելու համար այդ դպրոցների ղեկավարները վարձակալության գումար են պահանջում:

Հանրապետական ֆեդերացիայի նիստում քննարկվեցին նաեւ 1999 թվականին անցկացվելիք առաջին համահայկական խաղերին նախապատրաստվելու հարցերը: Այդ կարեւորագույն ստուգատեսի ծրագրում ընդգրկված են յոթ մարզաձեւեր, որոնց թվում նաեւ վոլեյբոլը: Համահայկական խաղերի վոլեյբոլի մրցաշարին լավագույնս նախապատրաստվելու, այն բարձր մակարդակով անցկացնելու նպատակով կազմվեց հանձնաժողով:

ԹԵՆԻՍ

Անդրե Աղասիի ռեկորդը

Մյունխենում շարունակվում են թենիսի մրցաշարերը: Տղամարդկանց մրցումներում յուրօրինակ ռեկորդ սահմանեց Անդրե Աղասին (ԱՄՆ), որը նման բարձրակարգ մրցաշարերին ոչ բնորոշ հաշվով՝ 6-0, 6-0 հաղթեց «Ռոլան Գարոսի» կիսաեզրափակիչի մասնակից, ֆրանսիացի Սեդրիկ Պյոլինին: Այդ խաղն ընդամենը 36 րոպե տեւեց: Վիճակագիրները նշեցին, որ նախկին «ռեկորդը» սահմանվել էր 2 տարի առաջ, հոլանդացի Ռիխարդ Կրայչեկի եւ ամերիկացի Մալիվայ Վաշինգտոնի հանդիպման ժամանակ. խաղը տեւել էր 46 րոպե:

Նշենք, որ հաջորդ փուլ է դուրս եկել նաեւ Կարոլ Կուչերան (Սլովակիա), որը պարտության է մատնել Հիշամ Արազիին (Մարոկկո):

Կանանց մրցաշարում խոշոր անակնկալ գրանցվեց: Փորձառու Յանա Նովոտնան (Չեխիա) պարտություն կրեց երիտասարդ Պետտի Շնայդերից (Շվեյցարիա)՝ 6-2, 5-7, 5-7:

Անդրե Աղասի

ԲԱՑԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքով

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ազգային լրատվամիջոցների հեռախոսակապը վերականգնված է, սակայն խնդիրը լուծված չէ

Հայաստանի չորս լրատվամիջոցների՝ «Նոյյան տապան» գործակալության, «Ազգ», «Ռեսպուբլիկա Արմենիա» եւ «Այժմ» թերթերի, հեռախոսակապը վերականգնվել է:

Հիշեցնենք, որ նշված լրատվամիջոցների խմբագրությունները հինգ օր շարունակ զրկված են եղել բոլոր հեռախոսներից անջատումը կատարվել էր առանց նախազգուշացման: Սեպտեմբերի 28-ին այս հարցի կապակցությամբ իրենց մտահոգությունը հայտնեցին Հայաստանի ԶԼՄ-ների ղեկավարները հրապարակելով համապատասխան հայտարարություն:

Սակայն վերոթվարկյալ լրատվամիջոցների ղեկավարների կարծիքով, խնդիրը դեռեւս չի կարելի լուծված համարել:

Հարցի վերջնական կարգավորման նպատակով սեպտեմբերի 30-ին «Նոյյան տապանի», «ՌԱ»-ի, «Ազգի» եւ «Այժմի» ներկայացուցիչները հանդիպում ունեցան Արմենտել ձեռնարկության բաժանորդների սպասարկման երեւանի տարածաշրջանային վարչության պետ Մարաս Վարդանյանի, միջազգային-միջքաղաքային խոսակցությունների հետ կապված բողոքների կարգավորման բաժնի պետ Վալերի Սարգսյանի, բաժանորդների սպասարկման բաժնի պետ Էդվարդ Հովսեփյանի հետ:

Պարզվեց հետեւյալը.

- Միայն Երեւանի տարածքում բնակիչների եւ իրավաբանական անձանց պարտքերը միջազգային եւ միջքաղաքային խոսակցությունների համար կազմում են շուրջ 2 մլրդ դրամ (4 մլն ԱՄՆ դոլար):

- Ներկայումս անջատված են 405 կազմակերպությունների հեռախոսներ, որոնց թվում են, համաձայն ԱԺ-ում հրապարակված հայտարարության, ՀՀ առողջապահության, մշակույթի եւ կրթության նախարարությունները:

- Արմենտել ընկերությունը, հանդիսանալով Հայաստանի հեռախոսային ցանցի իրավահաջորդ, իր վրա վերցնելով նրա պարտքերը, հրաժարվում է սակայն ընդունել իր նախորդի սխալների ու թերացումների պատասխանատվությունը: Այսպես, 1994 թ.-ից միջազգային եւ միջքաղաքային խոսակցությունների համար պարտքերի կուտակումը կատարվել է ոչ միայն բաժանորդների մեղքով. ժամանակին չեն ներկայացվել մուծման ծանուցագրեր եւ պահանջներ: Արդյունքում շատ բաժանորդներ չեն տեղեկացվել իրենց հեռախոսահամարի վրա գրանցվող պարտքերի մասին եւ հնարավորություն չեն ունեցել ժամանակին պարզել, արդյոք պարտը գոյացել է իրենց համարից կատարված հեռախոսազրույցի՞, թե ինչպես չարաշահումների հետեւանքով: Իսկ տարիներ առաջ կուտակված պարտքի սուգումը բավականին բարդ խնդիր է:

- Բաժանորդները, որոնք համաձայն չեն ներկայացվող գումարներին, իրավունք ունեն գրավոր բողոք ներկայացնելու, եւ մինչեւ սուգման արդյունքները բաժանորդին ներկայացնելը հեռախոսը անջատման ենթակա չէ:

- Հեռախոսների սպասվող անջատման մասին բաժանորդներին զգուշացնելու մեխանիզմ չկա. անջատումը իրականացվում է համակարգիչների կողմից ավտոմատ կերպով: Պրն Հովսեփյանը գտնում է, որ պարտք ունեցող բաժանորդի ինքը պետք է շահագրգռված լինի խնդրի լուծմամբ եւ ժամանակին ներկայանա բանակցություններ վարելու եւ համատեղ ելք գտնելու նպատակով:

- Լրատվամիջոցները, ինչպես եւ այլ իրավաբանական անձինք, չցանկանալով զրկվել հեռախոսակապից, Արմենտելի հետ ստորագրել են պայմանագրեր, որոնցում փաստորեն հարկադրաբար ստանձնել են Արմենտելի կողմից նշված պարտքերի պատասխանատվությունը: Բաժանորդներին չի պարզաբանվել, որ համաձայն գոյություն ունեցող կարգի, նրանք պարտքի գումարին չհամաձայնելու դեպքում իրավունք ունեն բողոք ներկայացնելու. պայմանագիրը ուժի մեջ կմնար միայն պարտքի գումարի սուգումից հետո: Իրականում եղել է հակառակը. պարտքերի սուգման բաժանորդի պահանջները կտրականապես մերժվել են եւ առաջարկվել է երկընտրանք. կամ զրկվել հեռախոսից, կամ ընդունել պարտքի առաջարկվող գումարը:

Ընդունելով 1-2 մլն դրամի միանվագ մուծելու անհնարինությունը, Արմենտելի ներկայացուցիչները առաջարկեցին կազմել պարտքերի ասիճանաբար մարման գրաֆիկներ: Ի դեպ, «Նոյյան տապանը» ոչ միայն ստորագրել է նման փաստաթուղթ, այլեւ երկու կողմից ընդունված գրաֆիկի հիման վրա կատարում է համապատասխան մուծումները, սակայն Վ. Սարգսյանի կողմից այդ փաստաթղթի օրինականությունը ժխտվեց պատճառաբանությամբ, որ այն կնքվել է Արմենտելի այլ բաժնի հետ: Այսինքն, Արմենտելի մեկ բաժին ստորագրում է փաստաթուղթ, որը նույն ձեռնարկության մյուս բաժնի կողմից որպես հիմք չի ընդունվում:

Այսպիսով փաստվեց, որ բաժանորդների անտեղյակ լինելը Արմենտելի կողմից սահմանված կարգերին հաճախակի հանգեցնում է նրանց իրավունքների ոտնահարմանը: Այդ առնչությամբ լրատվամիջոցների ներկայացուցիչները հանդես եկան առաջարկությամբ իրենց հնարավորությունները տրամադրել Արմենտելին՝ իր գործունեության լուսաբանման, բաժանորդներին գործող կարգին եւ դրա փոփոխություններին իրազեկ դարձնելու նպատակով: Առաջարկն արժանացավ Արմենտելի ներկայացուցիչների հավանությանը: Համաձայնություն ձեռք բերվեց վերստուգել լրատվամիջոցների հեռախոսապարտքերի իսկությունը: Երկխոսության արդյունքները ընդհանուր առմամբ գնահատվեցին որպես դրական:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

USAID

SIBLEY International — USAID — AED Academy for Educational Development

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID),
Sibley International-ը
եւ
Կրթական զարգացման ակադեմիան (AED)

Հիշեցնում ենք

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա հոկտեմբերի 5-ին, ժամը 11:30-ին, Թեֆեյան մշակութային կենտրոնում (Խանջյան փ. 50):

Հանդիպումը կվարի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Կապիտալ շուկաների ծրագրի» ղեկավար Դոն Հաթը:

Ակադեմիայի հեռախոսահամարներն են՝ 27-17-20, 26-84-71, 151-945 (AT&T), եւ 72-04 (կաս.)

Հայ ոսկերիչների միջազգային միության

երկրորդ ընդհանուր համագումար

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության եւ առեւտրի նախարարության հովանավորությամբ եւ Զարգացման հայկական գործակալության օժանդակությամբ Հայ ոսկերիչների միջազգային միությունը կազմակերպում է իր երկրորդ համագումարը, որը տեղի կունենա սույն թվականի հոկտեմբերի 3-4-ը Երեւանում:

Իրադարձության հիմնական հովանավորն է «Միդլենդ Արմենիա» բանկը, իսկ հովանավորներն են «Հայկական ավիաուղիներ» եւ «Սուիսս էյր» ավիաընկերությունները:

Համաժողովի աշխատանքներին կմասնակցեն հայ ոսկերիչներ ԱՄՆ-ից, Կանադայից, Լիբանանից, Բելգիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Ավստրալիայից, Լատինական Ամերիկայից, Ասիայից եւ այլ երկրներից: Օրակարգում Հայաստանում եւ նրանից դուրս հայ ոսկերիչների համատեղ ուժերով ներդրումային նախագծերի իրականացման, արդեն իսկ իրականացված եւ հաջողված ծրագրերի արդյունքների վերլուծություն եւ ամփոփում, նոր նախագծերի ձեռնարկման եւ իրագործման խնդիրների քննարկում:

Համագումարի մասնակիցներին իրենց ողջույնի խոսքը կհղեն ՀՀ նախագահը եւ կառավարության անդամները:

Համագումարի աշխատանքներին մասնակցելու ցանկություն ունեցողները կարող են հոկտեմբերի 3-ին ժամը 9:00-ին գրանցվել Արմենիա-2-ի սրահում:

ՀԱՍՑԵՆ՝ ԵՐԵՎԱՆ, Փ. ԱՄԻՐՅԱՆ 23/1, 6-ՐԴ ՀԱՐԿ:
ՀԵՌ. 53-30-83, 69-63, ՀԵՌ/ՖԱՔՍ՝ 53-64-56:

ՀԵՌՈՒՏԱՑՈՒՅՑԵՐ

2 հոկտեմբեր

17.00 Հայլուր
17.20 3-րդ ալիք
18.00 Հեռուստասերիալ «Դալլաս»
19.00 Սայրաքաղաք
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.45 Հեռուստակասպորտ
21.00 3-րդ ալիք
22.10 Գ/Ֆ «Բրյուս»
24.00 Հայլուր
00.15 Կեսգիշեր

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.15 Սպորտֆիլմ
19.25 ԱՐՏ-13. Հիթ շքերթ
19.45 Միասին («Միր»)
20.30 Սերիալ «Լոռենս Արաբացին» (5-րդ մաս)
21.00 Լուրեր
21.20 Լուս-ա-մութ
21.25 Աստղերը հուշում են
21.30 Ներշնչանք
21.55 Միրեցեք զմիմեանս
22.00 ԱՐՏ-13. Ծանոթ-անծանոթը
22.30 «02» լրատու
23.00 Լուրեր
23.10 Արկածային դրամա «Աղբեւում միայն ամախորդություններ են»

19.05 Մանուկի սուրհանդակ
19.15 Սպորտ
19.50 Մի անգամ
19.55 Գ/Ֆ «Հափշտակված աստեր»
(20.55 Սուրհանդակ)
22.00 Մանուկի սուրհանդակ
22.15 Գ/Ֆ «Վերջին ժանը»
(22.55 Սուրհանդակ)
00.00 Արթուր Էլբակյանի հեղինակային «Ուրբաթ գիշեր բոլորին հաճելի չունենք» ծրագիրը. Հանդիպում. «Նոր հայեր»: Գեղ.ֆիլմ. «Օղակը» (գլխ. դերում Նատասսիա Կինսկի) երգիչ ֆիլմ. «Սնանկը»
(00.55, 02.55 Սուրհանդակ)

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.45 Լուրեր
10.15 «Ցեղն էր»
11.30-16.00 Բիզնես TV
16.20 Գ/Ֆ «Ծերունի խոհարարը»
17.40 Սպորտֆիլմ «Բարոն Մյունհաուզենի արկածները»
17.55 Սեզամ փողոց
18.25 Ֆրանչիզ ծեղնահարկ
19.20 «Ցեղն էր»
20.10 Առողջություն
20.45 «Հարեւանների դատը»
21.45 Բարի գիշեր, երեխաներ

22.00 Ժամանակ
22.40 Դետեկտիվ «Հայելին ճաթեց»
01.00 Հայլուր
02.00 Գ/Ֆ «Ալիսան եւ գրավոնատը»

8.00 Բարի լույս, Ռուսաստան
10.15 Հերթապահ բաժանմունք
10.30 Բարի լույս, Ռուսաստան
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտական ծրագիր
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.30 Սերիալ «Սարգո բացահայտ»
13.25 Հին բնակարան. 1967 թիվ (2-րդ մաս)
14.45 Հաղար եւ մեկ օր
15.30 Սերիալ «Դինաստիա-2. Քույրի ընտանիքը»
16.20 Երկխոսություններ. կենդանիների մասին
17.15 «Շանսոնարեմ Կուզյոնին»
17.30 Սերիալ «Առաջին հանդուրժեր»
18.30 Ալտարակ
19.00 Բոլորի շուրթերին
19.30 Հեռուստասերիալ «Մայրեր, կանայք եւ փրոհիներ»
20.30 «Սարյինա ռոշա»
21.30 Սանտանասներ
21.45 «Բաղամիկ»
22.15 Դիմակներ-շոու
22.50 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Պատակախմբով»
00.40 Հերթապահ բաժանմունք
01.30 Ցեմ տասնյակ

Բաժանորդագրություն-1999

Բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, գրադարանների, հիվանդանոցների, բուժկենտրոնների, ֆիրմաների ղեկավարներին եւ անհատ հաղորդագիրներին

Ուշադրություն

Հարգելի բաժանորդներ

Սկսվել է 1999 թ. 1-ին կիսամյակի թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրությունը, որը իրականացնում է «Տպագրություն» գործակալությունը՝ Հայաստանի Հանրապետության մասնակի տարածման առաջատար, ամենահին եւ ամենախոշոր կազմակերպությունը:

«Տպագրություն» գործակալությունում ամենամատչելի գներով դուք կարող եք բաժանորդագրվել թերթեր, ամսագրեր, գրքեր, դասագրքեր, տեղեկագրքեր եւ այլն, որոնք հրատարակվում են Հայաստանում, ԱՊՀ երկրներում եւ Հեռավոր արտասահմանում:

Երաշխավորվում է բաժանորդագրված թերթերի եւ ամսագրերի ժամանակին առաքումը ցանկացած վայր (բնակարան, աշխատավայր, մոտակա կրպակ):

«Տպագրություն»-ում Ձեզ սպասում են բազմաթիվ զեղչեր եւ նորամուծություններ:

Զանգահարեք 45-82-00; 45-82-56 եւ Ձեզ կայցելեն մեր գործակալները բաժանորդագրությունը տեղում ձեւակերպելու համար:

Բաժանորդագրությունը կարող եք ձեւակերպել նաեւ հետեւյալ հասցեներով.

1. Հանրապետության հրապարակ N10 փոստատան բաժանմունքում «Հայփոստ»-ի ներկայացուցչի մոտ:
Հեռ. 56-79-40
2. Սասունցի Դավթի հրապարակ 2 (Կայարանամերձ հրապարակ 2), «Հայփոստ» գործակալություն:
Հեռ. 45-82-00; 45-82-56; 58-94-12 (տարբերյա կաց)
Կաս. 62-49; հեռ./ֆաքս 45-89-17; 45-06-91
3. «Հայփոստ»-ի (նախկին «Սոյուզպեչատ»-ի) կրպակներում:
4. Բոլոր մարզային «Հայփոստ» («Սոյուզպեչատ») գործակալություններում՝ հանրապետության ամբողջ տարածքում՝

Արագածոտնի մարզ, ք. Ապարակ	հեռ. 8-243-3-51-57; 3-44-87
Արարատի մարզ, ք. Արտաշատ	հեռ. 8-245-2-25-49
Արմավիրի մարզ, ք. Արմավիր	հեռ. 8-247-6-37-70; 6-26-74; 8-259-5-26-51
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ	հեռ. 8-264-2-21-84
Լոռվա մարզ, ք. Վանաձոր	հեռ. 8-257-2-55-80; 2-77-00; 2-76-00
Կոտայքի մարզ, ք. Կոտայք	հեռ. 8-261-2-22-52
Շիրակի մարզ, ք. Գյումրի	հեռ. 8-269-2-38-98
Սյունիքի մարզ, ք. Կապան	հեռ. 8-292-6-23-83
Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր	հեռ. 8-246-2-26-51
Տավուշի մարզ, ք. Իջեւան	հեռ. 8-263-3-25-73
«Արցախանոց» ք. Ստեփանակերտ	հեռ. 8-89322-4-34-65; 4-14-57; 5-15-25

Դիմելով մեզ, դուք կխնայեք ձեր ժամանակը եւ գումարը:

ՀՀ ՍԱՍՈՒՆԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՍՊԳՇԻՆԲԱՆԿ՝ ԵՐԵՎԱՆ ՀՀ 121010001836 ԿՈԴ 00401345

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Գնանշում 917. Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 1. 10. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@